

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ՀԱՅԵՐԵՐ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՊԼԵՎԵԻՑ ՅԵՏՈՅ

Այն յանկարծակի և զօրեղ ցնցումը, որ առաջ բերեց կառավարչական ջրվանդանում Պլեվեի մահան պատիժը, մի անգամ ևս նորագեց ռուս հասարակութեան վաղեմի յոյզերն ու երազները: Արմատական փոփոխութիւնների պահանջ դրին ոչ միայն վաղուց յայտնի «կասկածելի» տարրերը, ոչ միայն Սուլթանի պէս հողմացոյցները, — ազատութեան և արդարութեան մասին բարբառել սկսան և մինչև ոսկորների ծուծը պահպանողական Մէջերսկինները: Ինքը՝ Սկետսոպօլի Միրսկին՝ մայր թագուհու և Պօլեմոսոսցիի բովով անցած չինովիկը, նոյնպէս շտապեց մարդասէր բաղձանքներ յայտնել: Հպատակ ազգերի, օտար դաւանութիւնների հաւասարութեան մասին ճառելը նա նոյնիսկ իր վստահութիւնը յայտնելու շնորհն արաւ այն հասարակական ուժերին, որոնց ջանքերը տասնեակ տարիների ընթացքում խեղդուում էին անխնայ, անողորմ խոստում են շատերը, խոստովանում, չեղում են, որ Ռուսաստանը չի կարող ներկայ լէփմի տակ մնալ: Բարի դիտաւորութիւններ ամէն օր լսում են, բայց և այնպէս ամիսներ են անցնում, և իրերի դրութիւնը նոյնն է մնում: Եւ իսկապէս, ինչ է կատարել Պլեվեի չքանալու օրից ի վեր:

Նոր միևնույն ամենից շատ աչքի ընկնող քայլն այն էր՝ որ նա թող տւեց «գէմստվոնների» ներկայացուցիչներին համախմբել և խորհել այն միջոցների մասին, որոնցով կարելի է թնթալանքներ պատերազմ՝ բռնողների դուռ վիճակը: Բռնապետութեան ներկայացուցիչը բարեհաճեց արտօնել, որ ժողովրդի ներկայացուցիչները հոգ տանեն այն անհամար ընտանիքների մասին, որոնց աշխատաւոր ուժերը 10, 30, 50 հազարներով զոհ են գնում նոյն բռնապետութեան սպանիչ քաղաքականութեան: Եւ սա համարում է մի բարիք, միևնույն անգամ մի շնորհ, որ անուում է ժողովրդին... Աքսորից վերադարձան մի երկու անմեղներ, բայց հազարաւորները դեռ մնում են հայրենի օջախից կտրւած: Շիւսէլբուրգի դռները բացւեցին. յեղափոխական հին մարտիկներից դուրս բերին 3 կմախքներ, բայց արքայիցին հիւսիսային մի յետ ընկած նահանգ:

Ֆինլանդացիներին խոստում եղաւ՝ նրանց արտօնու-

թիւնների կրճատումը գաղարեցնել բայց շատ բան է մնացել կրճատելու: Բացառիկ օրէնքները ևս պէտք է վերանայն, երբ... Ֆինլանդական ժողովուրդը փոխած կը լինի իր զգացումները դէպի իր վեհապետը: Իբր թէ յարգելով ֆինլանդական հիմնական օրէնքները, Պլեվեի տեղ պետական քարտուղար Նշանակեցին մի ֆինլանդացի, որին ժողովուրդը ատելով ատում է իր ռուսամոլութեան համար: Եւ այս բոլորի հետ միասին նոր միևնույն Նշանակեց գրաքննութիւն, որին պէտք է ենթարկեն ֆինլանդիայում հրատարակող բոլոր գրքերը:

Վեհացիների վերաբերմամբ ևս շատ անուշ խոստումներ արւեցին: Դրա արդիւնքը եղաւ առայժմ այն, որ աշատամիտ միևնույն կարողացաւ լեհ ազնականներից մի քանի տասնեակ հոգի քարշ տալ դէպի Եկատերինա 11-ի մահաբանի բացման հանդէսը, այն Եկատերինայի, որ սկիզբը դրեց Վեհաստանի բաժանման: Եւ միւս կողմից նա այնպիսի խստութիւններ գործ դրեց Վեհաստանի զանազան կողմերում տեղի ունեցած բանտարկան ցոյցերի ժամանակ, որ ի վերջոյ գործը հասաւ արիւնահեղ ընդհարումների, որոնց վկայ եղաւ Վարչական վերջին օրերս:

Դէպի հրէաները նոր միևնույն նոյնպէս լաւ տրամադրութիւն ունի, միայն վախենում է նրանց տալ այն «արտօնութիւններ», որ «վայելում» է բուն ռուս ժողովուրդը, չլինի թէ երես առնեն... Առայժմ նա ուզում է հրէայ ռուսանդների վերաբերմամբ սահմանած սոկոսը բարձրացնել և, բացի այդ, նոր «պօգրոմների» դէպքերում թող չտալ ռուս ամբոխին սպանութիւններ գործել, այլ միայն կողոպտել, թաւանել, ծեծել:

Հայերին էլ հասաւ նոր միևնույն սփռած «բարիքները»: Լուր տարածւեց, որ յափշտակած կաւածները յետ պիտի տրւին և հայերի հետ հաշտութիւն պիտի կայանայ: Այս աւետիսի հիմքը ծառայել է մայրաքաղաքի մի թերթի լուրը, թէ Սիմֆերոպօլի հայոց դպրոցի կառավարչութիւնը նորից յանձնւած է հայ հոգեւորականութեան: Այժմ պարզուում է, որ այդ քայլը արւած է լոկ այն պատճառով՝ որ տեղական աղքատիկ եկամուտներով անկարելի է եղել կառավարել դպրոցը:

Իսկ միևնոյն ժամանակ հայ արքայականների բաղամաթիւ շարքեր, որոնց մէջ վերջերս և զաւակների տէր կանայք, տանում ցրում են Ռուսաստանի ներքին նահանգներում, առանց դատի, առանց քննութեան: Նոր ռուս գաղթականներ շարունակում են քշել կովկաս:

քնակեցնելու համար այն վայրերում ուր իրենք տեղացիք սակաւահողութիւնից ստիպւած են գաղթել:

Միմիայն Ռուսաստանում և այն էլ պէվէական ընթերցող յետոյ կարելի է այս տեսակ փոփոխութիւններին կարեւորութիւն տալ, նրանցով մխիթարել և նրանց հիման վրայ ապագայի յոյսեր տաճել: Եթէ նոր միևնույն օրով իրօք մի բան փոխւում է, դա ընթերցող չէ, դժբախտաբար, այլ տրամադրութիւնը այն չափաւոր կոչւած տարրերի, որոնք մօտեցել էին յեղափոխական շրջաններին՝ Պլէվէի ոստիկանական իշխանութեան օրերում: Սկսած սօսօլի Միրսկու մի քանի «ազատամտական» ցոյցերից յետոյ, այդ տարրերը նորից սկսում են հակել դէպի կրակորական դեր: Մինչդեռ հէնց նրանք, որ անձնապէս լաւ ծանօթ են ռուս բռնակալութեան պատմութեանը, պէտք է գիտակ լինեն, որ նեղն ընկած կառավարութեան համար բոլոր անորոշ խոստումները, բոլոր անուշ խօսքերը միմիայն օրօրներ են, որոնցով նա ձգտում է ժամանակ շահել՝ իր դիրքը ամրացնելու յուսով:

Ուրիշ դիրք չի կարող բռնել մի կառավարութիւն, որ պատերազմի պատճառով պատուած է անանում իր քողը և իր վարկը հիմնովին կտրած աշխարհի առջև: Հաշտարար ոգի պէտք է ցոյց տայ նա, երբ տեսնում է, թէ ինչպէս եսպօնական ղէնքի աջողութիւնները ցնծութեան ազդակներով են ողջունում ոչ միայն հպատակ ազգերը, այլև բուն ռուս զաւակները: Ուրիշ ինչ կարող է նա անել, երբ մի քանի նահանգներում սով է տիրում, որ սպառնում է տարածել ամբողջ երկրի վրայ: Երբ պատերազմ քչողների և նրանց ազգականների լացն ու կոծը կամաց կամաց փոխւում են սպառնալի կոչերի, երբ պահեստի զինւորները հազարներով փախչում են արտասահման, կամ մնալով ներսը՝ պատրաստւում են դիմադրութեան: Վերջապէս ուրիշ լեզու չի կարող բանեցնել մի միևնույն, որի աչքերի առջև միշտ ցցւած են իր երկու նախորդների ուրակները: Նա որ տեսել է Սիպիափիի գետնաթաւ դիակը, որ վկայ է եղել Պլէվէի մարմնի քրքրւած մասերը փողոցի զանազան անկիւններից ժողովելիս, նա բնականաբար ուրիշ երգ պիտի երգի, ամենաբարձր տրամադրութիւններ պիտի ցոյց տայ և աջ ու ձախ յոյսեր ներշնչի:

Չպէտք է մոռանալ միևնույն ժամանակ, որ որքան էլ իրօք ազատամիտ լինի ինքը Սվետսոպոլի Միրսկին, նա բռնակալութեան ներկայացուցիչն է, նրա կողմից ընտրւածն է, ուրեմն նրա շահերի պաշտպանն է կոչւած լինելու, և ոչ միայն նրա, այլև նրա թեւի տակ զօրեղ դիրք հաստատած կամարիլայի: Իսկ սա գեռ իրեն դրուած է և ան տէր է համարում, իր օրգաններում ըստ առաջնոյն շանթեր է թափում «խռովարարների» գլխին: Պօքեդօնօսցեվ կոչւած ճիւղը յարմար ըրպէի է սպասում իր գլուխը բարձրացնելու և ճանկերը պարզելու: Առաջին անգամը չէ սա: Առաջներում էլ միապետութիւնը նեղ տեղն է եղել խռովարարները նոյն ճառերն

են ասել և աւելի համարձակ ճառեր: Առաջներում էլ կամարիլան մի որոշ ժամանակ խոհեմութիւն է ունեցել քաջած մնալու: Բայց հէնց վտանգը անցել է, նա նորից թեւ է առել և վամպիրի նման պինդ կպել ժողովրդի ցամաքած մարմնին: Այսպիսի պարագաներում ճարպիկ միևնույնի պերը պէտք է կայանայ նրանում, որ երկգիմի յայտարարութիւններ անի, խօսել տայ զրանց մասին, ոչ մի դրական խոստում չտնի, ոչ մի սրտը ձեռնարկ չիրագործի:

Բայց կարող է այսպէս շարունակել և սրանից յետոյ. — իհարկէ, ոչ: Այստատուաբար միջոցները չեն գոհացնելու ոչ ընդգիծողներին և ոչ կամարիլային, որը արդէն ամէն տեսակ ինտրիգներ է լարում՝ իր նախկին ապահով դրութիւնը վերականգնելու համար: Մենք վախ չունենք այլևս, այս անգամ նա աջողութիւն չի քսնի: Նրա ամէն մի փորձը այդ ուղղութեամբ աւելի զարկ կը տայ յեղափոխական գործին: Արդի յեղափոխական միջավայրը մի 20 տարի առաջ եղած սահմանափակ շրջանը չէ, որ բռնակալութիւնը կարողանայ ընդգրկել խեղդել իր ստորածած ցանցի մէջ: Բռնութեան ուժը այլևս չի պատիճնելու դիւղացիական և բանւորական լայն կազմակերպութիւնները, որոնք ձգւում են Արաբսի ափերից մինչև Ֆինլանդիայի ժայռերը: Դրանց վրայ պիտի լինի նոր Ռուսաստանի յոյսը:

Այսօր զէմստփօնների ներկայացուցիչները ընթերցողներին են մշակում, պահանջում են ընտրողական ամենալայն իրաւունք, խօսքի, մամուլի, գումարումների ազատութիւն: Բայց կասկած չկայ, որ այս բոլորի դէմ «ազատամիտ» միևնույնը — եթէ մնայ պաշտօնում — իր կողմից մէջ պիտի ձգէ իր սեփական ծրագիրը, թեկուզ հէնց այն, որ լոյս տեսաւ արդէն եւրոպական մամուլի մէջ. ամբողջ Ռուսաստանը նա պիտի բաժանի 16 մեծ շրջանների, որոնք պիտի ընտրեն մի մի պատգամաւոր. բոլոր ընտրւածները՝ կառավարութեան կողմից նշանակւած 16 անդամների հետ միասին՝ պիտի կազմեն մի մարմին, այն էլ խորհրդակցական: Եւ եթէ գործը թողնելի միայն զէմստփօնների ներկայացուցիչներին, ամենաբարեաւոյն զէմպրում նա կը յանգի անվերջ սակարկութիւնների:

Առաջնորդւած այն իրողութիւնով, որ կառավարութիւնը զինուորներ անելու ձևեր է ցոյց տալիս յեղափոխական հարւածների ազդեցութեան տակ կազմակերպութիւնները պէտք է միջամտեն աւելի մեծ թափով և հասցնեն նրան իրական զինուորներ:

Ինչպէս գարնանային առաջին որոտը, որ գալիս է ցնցելու ձմրան կապանքները — Սազօնովի ռուսի գոռոցը կեանքի ու շարժման յոյսեր սփռեց լայնատարած Ռուսաստանում:

Բայց մի որոտով «գարուն» չի բացուում...

ԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՊԱՍԻՈՂ ՊԱՀԵՍՏԻ ԶՕՐԱԿՈՉԻ ԱՌԹԻԻ

(ՌՌՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ)

Հատուցման ժամը հասաւ...

Ռուս արիւնարու կառավարութիւնն իր դէմ այժմ ունի ոչ թէ իր խաղաղ, անզէն, անզօր ժողովուրդը, որի հետ վարուում էր զգուշի քաջաճոյքով, նեղելով, կողոպտելով, նոյնիսկ խմբական կոտորածներ կազմակերպելով, այլ իր դէմ ցցւած մի հզօր թշնամի՝ ճապոնիւն, որ շնորհիւ իր ազատ քաղաքական կազմակերպութեան լինելով աւելի ընդունակ, աւելի քաղաքակիրթ և պատրաստած, անընդհատ հարւածներ է թափում ռուս բանակի գլխին, որին առաջնորդում են ռուս պետութեան մահաբեր կառավարչական սխտէմի իսկական պտուղները՝ բթամիտ զօրապետները։ Ճապոնիայի յաղթական ընթացքի առաջ ռուս կառավարութեան ուժերը քամւում են և նա ստիպւած է դիմել նորանոր զօրակոչի այս կամ այն նահանգում, ստիպւած է թափել իր վերջին ճիգերը։

Կառավարութիւնը կամեցաւ զօրակոչ անել և Լեհաստանում։ Վարչապաի ոստիկանապետը յունիսի 3-ին կոչ արեց բոլոր պահեստի զինւորներին՝ ներկայանալու որոշւած տեղը փորձի համար Բայց չարաչար սխալեց։ Ոչ մի զինւոր չ'երևաց այդ օրը նշանակած տեղը. իսկ յունիսի 22-ի և 23-ի բանւորական ցոյցերը պարզեցին լիրբ կառավարութեան՝ թէ Լեհաստանից ոչ մի պահեստի զինւոր չի գնալու և նա լռեց։ Իսկ այժմ, նա իր լըբութեան մէջ այնքան է անխելքացել, որ մտածում է զէնքի կանչել պահեստի ուժերը Կովկասից, այն Կովկասից, որին տարիների ընթացքում նա շարունակ խաբել, վիրաւորել, անարգել է... Նա յանդգնում է կամենալ, որ նոյնիսկ հայը, միապետական քաղաքականութեան այդ մեծագոյն Զոհը, թողնի իր աւերւած տունը, ձգի հէնց ապերախտ ռուս կառավարութեան ձեռքով քանդուած իր բունը և գնայ դէպի Հեռաւոր Արևելք... գնայ ռուսական յաղթանակը պայմանաւորելու համար։

Ռուս կառավարութիւնը կամենում է, որ մենք արձագանք տանք կառավարական այդ կոչին, որ այդ մարդասպան, խռնակալ կառավարութեան տրամադրութեան տակ գնեւք մեր լաւագոյն երիտասարդներին՝ ծաղիկը մեր ժողովուրդի, ինչպէս այդ կատարեցին մեր հայրերը 19-րդ դարու ռուս-պարսկական և ռուս-տաճկական բոլոր պատերազմներում։ Այս պատերազմը վարում է նոյն այն կառավարութիւնը, որ գլխաւոր պատասխանատուն է հայրեր հազարաւոր հայերի կոտորածներին թիւրքիայում, որ ընդամենը մի տարի առաջ կոտորում էր մեզ հայերիս և Կովկասի բոլոր ծայրերում, այն կառավարութիւնը որ ամբողջ մի դար խաբեց, շահագործեց մեր միամտութիւնը, մեր ուժերը ու մեր արիւնը իր աշխարհակալական նպատակների համար, ապա խլեց մեր դպրոցները, մեր ազգային եկեղեցական հարստութիւնը, կողոպտեց, հացազուրկ դարձրեց մեր գիւղացիներին՝ խլելով նրանց հողերը և տալով ռուս գաղթականներին։ Մեր վերքերը դեռ մնում են, Կովկասի բանտերը լի են հայի բռնաբարւած իրաւունքների համար մարտնչողներով, ռուսական հեռաւոր արքայապարիսպից դեռ լսում են մեր հարիւրաւոր եղբայրակիցների անէծքն ու հեծեծանքները։ Միթէ՞ հարկաւոր են նորանոր ապացոյցներ, որ ռուս կառավարութիւնը հայ տարրի ամենակատաղի թշնամին է։

Չարատանջ հալածւած հայ ժողովուրդ։ Ահա այն կառավարութիւնը, որ այժմ իր նեղ ժամին երբ հոգեւորքի մէջ՝ ընկած է հզօր թշնամու ոտքերի տակ իր գործած ոճիրների ծանրութիւնից, դիմում է քեզ, քո զաւակների արիւնն է ուզում իր փրկութեան համար։

Որպիսի՞ դառն հեգնանք, որպիսի՞ կատաղի ծաղը...

Հայոց աշխարհում պէտք է գտնւի՞ արդեօք մի հատիկ հայ մարդ, մի հատիկ հայ սիրտ, որ յանձն առնի մեր դարաւոր դահճի համար արիւն թափելու գերազանցապէս յիմար, անհունօրէն ապուշ պարտականութիւնը։ Արիւնոտ ու սգաւոր վայրերում, ուր տակաւին չեն ցամաքել ռուսական գնդակների տակ նահատակւած անմեղների կարմիր արիւնը, այնտեղ, ուր մի ամբողջ ժողովուրդ է ողջակիզւում ցանուցիր մոխրակոյտների վրայ, պէտք է գտնւի՞ արդեօք խիզախ մէկը, որ կարողանայ ծառանալ հայութեան այնքան նուիրական զգացմունքների դէմ, յանդուգն մէկը, որ կարողանայ ըմբոստանալ այն հզօր ու խորունկ պարտականութեան հանդէպ, որ երկաթի պէս ծանրանում է ամէն մի հայ մարդու վրայ...

Հայեր, խորհե՛ք լըջօրէն... Պատերազմից վերադառնալու ոչ մի յոյս չկալ։ Ռուսական խելացնոր աշխարհում չեն գնահատում զինւորի կեանքը. ոչինչ այնքան անարգւած չէ այնտեղ, որքան մարտնչող մարդու անհատականութիւնը։ Քչում են, ուր ուզում են. խաղում են մարդկանց արեւի հետ, ինչպէս կամենում են... Ապահով չէ մանաւանդ հայ զինւորը... Ռուս կառավարութեան տարածած սուտ լուրերին հաւատալու միամտութիւնը երբեք չունենանք... Դուք, պահեստի զինւորներդ, իբրև թարմ ուժեր պէտք է սղարկէք պատերազմի ամենավտանգաւոր վայրերը, ուր արիասիրտ ճապոնի սուրը այնքան կտրական է, այնքան ճակատագրական է ձեր ամենքիդ համար։ Անմտութիւն է ոչխարի պէս ընդառաջ գնալ դէպի մի անարգ և գարշելի մահ, անմտութիւն է եզան նման վիզը երկարացնել՝ ռուս կառավարութեան յաղթանակը պայմանաւորելու։

Համաշխարհային խաղաղութեան համար անհրաժեշտ է ռուսական բռնապետութեան պարտութիւնը. ազատ մտքի, գերագոյն արդարութեան ու մարդկային սրբազան իրաւունքների համար կարեւոր է նրա անկումը։ Իր երկաթէ ծանրութեամբ նա ճնշում է բովանդակ աշխարհի բոլոր ժողովրդական շարժումները։ Պէտք է ազատել տառապող մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը ռուսական վտանգից։ Իր ճիւղաղային թաթով նա խեղդում է թիւրքահայկական խնդիրը. թող ռուսական բռնապետութիւնը պարտւի, որ այլևս անկարող լինի վճռական դեր խաղալ արիւնոտ հայաստանցու ճակատագրի վրայ...

Թող թուլանայ բռնապետութիւնը, թող ջարդւի պետական վայրենի ուժը, որպէս զի ռուսահայաստակ ուրիշ

ազգերի հետ միասին կովկասահայն էլ, համեմատաբար գոնէ, աւելի ազատ, աւելի ապահով ապրի... Յանուն գերագոյն արդարութեան, յանուն տառապող մարդկութեան, յանուն թիւրքահայ ողջակիզող ժողովրդի, յանուն կովկասահայ հալածող համայնքի անհրաժեշտ է ուսն կառավարութեան պարտութիւնը...

Հատուցման ժամն է հասել այս անարգ կառավարութեան առաջ: Թող նա մենակ հաշիւ տայ իր գործած անթիւ չարիքների համար իր ժողովրդին, իր բոլոր զոհերին:

Այս օրերին, երբ վճռուած է ուսն բռնակալութեան տակ ճնշած ժողովուրդների բախար, երբ ամէն մի լեհացի, ամէն մի ֆինլանդացի, ամէն մի վրացի, ամէն մի հրէայ և իսկական ժողովրդի շահերը հասկացող ամէն մի խելացի ուսն սրտատրոփ սպասում է միապետութեան զօրքի նորանոր պարտութիւններին, ուսն խայտառակ բռնակալութեան անկման, ամէն մէկը պարտաւոր է հեռու փախչել այդ դալթակալութիւնից: Եւ ժողովուրդը սրբազան պարսպ պէտք է համարի այդպիսիներին պաշտպանելու, խրախուսելու, պատսպարելու...

Այս սե օրերին ոչ մի հայ իր աւուր չէ ունի ուսական բռնակալութեան համար կուելու: Մինք ինքներս չ'ուժեղացնենք այն թունոտ ձեռքը, որպէս զի յետոյ աւելի չտանջենք, չ'ամրացնենք այն բազուկը, որպէս զի յետոյ աւելի չհորանանք նրա բիրտ ծանրութեան տակ...

Դիմադրենք, կուենք քանի կարող ենք, քանի սպրով ենք...

ՀԱՅ ԳԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԽՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

«ԴՐՕՇԱԿ»Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՀՐԱՏԱՐԱՆԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՄ)

ԹԻՖԼԻՍ, 7 ՄԱՅԻՍԻՆԻ

Ռուս կառավարութիւնը մի մոռ ռմիր ևս գործեց: Նոր միմիստրի կարգադրութեամբ՝ 8-10,000 տաճկահայեր, որոնք 15 տարուց ի վեր հաստատուած են Սև ծովի ափերին, որպէս ծխախոտի մշակողներ, հրաման են ստացել մի շարաւիւղ մէջ թողնել երկիրը և վերադառնալ Թիւրքիա: Հակառակ սլարագայում՝ մրամք ալիտի դիտելի իբրև Ռուս սաստամի հպատակներ և ալիտի փոխադրելի Արևմտեղի ու Վոլոգդայի մահամզները, Դա կատարեալ ուղիւմ է այդ աշխատաւոր ազգաբնակչութեան համար, որը իր յամառ ջանքերով մշակել էր այդ վայրերի երկիրը, որ կառավարութիւնը կ'ուզէ այժմ ուսն զաղթակամներով բնակեցնել: Ռուս գործարարատէրերը դիմում են արել միմիստրին, խնդրելով յետաձգել այդ հրամանի գործադրութիւնը, որ մրամք ահագին կորուստներ է պատճառում: Ամհմարին է Ոկարագրել այդ դժբախտների յուսահատութիւնը. մրամք ոչ կարող են ապրել հիւսիսային ցուրտ կլիմայի մէջ և ոչ էլ վերադառնալ Թիւրքիա, ուր մրամք մուտքը արգելած է:

ՄՈՒՇ, 4 ՄԱՅԻՍԻՆԻ

(ԹԱՐԻԳԻ ԳԾՈՎ)

Զօրամոցները արդէն շինուած են Սասունի բարձրութիւններին վրայ՝ Տաւրիկ, Սեւալ, Տափիկ, Գէլիէկուզամ, Իշխըմձոր: Բիթլիսի վալի Ֆէրիտ Բէյը սուլթանի հրամանով բարձրացաւ Սասուն, հանդիսաւոր կերպով բաց ամեկու զօրամոցները: Թշուառութիւնը և յուսահատութիւնը ամեկաւորագրելի են Սասունի միացորդ ազգաբնակչութեան մէջ, որը ծմրած խիստ շրջանում՝ զրկւած է բնակարաններից, զգեստից ու ապրուստի միջոցներից: Կառավարութիւնը այժմ մերժում է իր խոստացած օգնութիւնը: Զինուորները շարունակում են իրենց վայրագութիւնները: Հաղորդակցութիւնը կտրուած է Սասունի և դաշտի միջև: Հայերի զենքերը խլում են չարչարանքներով: Այս բոլոր խտրութիւնները միատակ ունեն իսպառ յուսահատեցնելու սասունցիներին և ստիպելու մրամք զաղթելու: Եւրոպական հսկողութեան բացակայութիւնը ծայրայեղ լքում է պատճառում ժողովրդին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ

(ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻՍ ՈՂՂԱԾ)

Մուշ-Սասուն, 25 յուլիս 1904

Սասունի և Տաւրիկի արկածեալ ժողովուրդը թէ ինչ դառն անցքեր անցուց և կ'անցունէ արդէն յայտնի են ձեզ. կացութիւնը փոքր ի շատէ պարզւած են մեր մատուցած սրտաճվիկ և աղէտալի վիճակացոյցերով: Մենք ահա ի տանջանքներու մէջ փրկութեան ելք մը գտնելու համար՝ մեր յոյսը բնականաբար կեդրոնացուցինք ազգային պատրիարքարանի և ուրիշ մարդասիրական ձեռնարկութեանց վրայ. եթէ արդարասիրութիւնը ձեռք չհառկառէ մեզի, գիտենք որ մեզի փրկութիւն չիկայ այլևս: Անհուն զոհեր տւինք կեանքի և ստացա՞քի, սակայն դժբախտ ենք ասելու որ մեր սոսկալի դուլթիւն ամենեւին բարեփոխութիւն մը չի կրեց. դեռ երկար պիտի հոսէ մեր արիւնը և դեռ պիտի բազմապատկւն մեր վիշտերը:

Վերջին սոսկալի կոտորածէն յետոյ, դեռ բախտ չունեցանք նորիսկ շունչ մը առնելու: Սասուն և Տաւրիկ հիմա կը գտնուին հետեւեալ տխուր վիճակի մէջ:

1) Մեր աւերակ տուններ տակաւին շնորհագեցան, բոլորս ալ անպատսպար ենք, ցորեկ արեակէզ, գիշերներ առանց ծածկոյթի, ցրտահար:

2) Սնունդ գրեթէ չիկայ, մանաւանդ Տաւրիկի մէջ գրեթէ ոգեպահիկ չի գտնուիր:

3) Մեր վնասներուն երբեք հատուցում չեղաւ:

4) Ամենքս մերկ ու բոպիկ ենք:

5) Ամենեւին չունինք անկողին, խշտի և այլն:

6) Ձեռք կը մօտիկնայ, ձեռնային ոչ մի պատրաստութիւն կայ:

7) Ահա զօրանոցներու շինութեամբ մեր վրայ պիտի ծանրանայ թիւրք զօրքերու ահաւոր ներկայութիւնը, մեր կիները, աղջիկներն ու տղաքը անոնց ձեռքը պիտի մնան և կառավարութիւնը միմիայն զօրանոցներու շինութեամբ է որ կը զբաղի, կարծես ամբողջ Սասունը զօրանոցի պիտի վերածէ:

8) Մեր եկեղեցիներն խոպան մնացին, որովհետեւ զօրքերու բազմութեան մէջ ինչպէս պիտի պաշտենք մեր կրօնը, որ այսքան հալածւած է իսլամական խժոժու-

Թեամբ, Անցեալները թիւրք զօրքերը հետեւեալ նախա-
տիւքը ստեղծեալ են սուրբ խաչին դէմ, բան մը, որ
խաչմակաւ ժողովուրդներուն կրնայ արատ ալ բերել,
ընկուզենի մեծ ծառի մը կեղեք առնելով խաչ մը կը
բերեն և զայն աղբով կը լեցնեն և վերեւ կը գրեն.
«Խրիսթիանաւարդն խաչի»:

9) Մեր փայտերն ու ծառերը (ժանաւանդ ի Տալ-
ւորիկ) բռնի կտրելով կառավարութիւնը զօրանոցներու
յատկացուցած է առանց փոխարինութեան, որպէս զի
չյաջողիւք մեր տուններն ալ շինել:

10) Որ տեղեր որ զօրքեր գտնին, մեր կիներն ու
աղջիկները չեն համարձակիր ապրուստի համար ասդին
անդին երթալ:

11) Բագրանցի և այլ քիւրդ աշիրէթներով Մշոյ
լեռը լեցուցեր է, որոնք չեն թողուր որ սասունցի հայերս
մեր ապրուստը ճարելու համար Մուշ գանք. անցեալ օր
կէլիէկուպանցիներն ծեծելով ետ դարձուցին:

12) Խուժը մը տալուրիկցիներ տակաւին լեռները
թափառական կը մնան, չեն համարձակիր վար իջնել,
որովհետեւ սպաննացած են սպաններ:

13) Կարգ մը անմեղ անձինք մեզմէն բանտարկելու-
թեան դատապարտուած են:

14) Տիրող թշուառութենէն ամէն օր մեռնողներ կան:
Եթէ այսպէս թւենք դեռ շատ ցաւեր ունինք և
հետզհետէ պիտի աւելնան. կը խնդրենք արգահատէք
մեր սոսկալի թշուառութեան վրայ. կարգադրութիւն մը
հաճիք փութացնել. իսկ եթէ այս գառնութիւնը շա-
րունակի, կը խնդրենք որ մեզի ըսէք ճար մը ընենք մեր
գլխուն, որովհետեւ մեր յոյսը միմայն ձեր գթութեան
և ազգախնամութեան վրայ մնացած է: Ի սէր Աստուծոյ,
ի սէր քրիստոնէութեան, կամ մեզի ճար մը ընէք և կամ
զմեզ սուրէ անցունել տէք՝ որ ազատինք:

Ի դիմաց Սասնոյ և Տալուրիկի հայ ժողովրդեան

(22 Ստորագրութիւն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՍԱՍՈՒՆՈՒՄ

Մուշ, 26 հոկտեմբեր

Կարօտեալներու ընդհանուր կացութիւնը շատ աղե-
խարշ է, մանաւանդ սասունցիներու վիճակը աննկա-
րագրելի է: 1) Անոնք չունին շնորհրդ պատսպա-
րաններ. 2) Բոլորն ալ (ամենուն թիւը մօտ 8,000 է)
մերկ են—ոչ տրեխ, ոչ զգեստ, ոչ անկողին և ոչ իսկ
փսիաթ ունին. 3) Ոգեպահիկ ամենին չկայ: Կառա-
վարութիւնը ամառընէ նպաստ տալը դադարեցուցեր է:
Շատ գիւղերու տներու շինութեան գրամն ալ չտրեցաւ.
ամբողջպէս. Կահիլի է անոնց վիճակը: Թշուառութենէ
ամէն օր մեռնողներ կան: Զինուորներու հսկողութեան
ու պաշարման տակն են: Արգելած են որ սասունցիները
քաղաք կամ դաշտ իջնեն: Նոյնիսկ գիւղէ գիւղ չեն
կրնար երթալ: Եթէ սաստիկ ստիպւին, պէտք է թեղքէրէ
ստանան տեղայն զինուորական հրամանատարէն, այն ալ
ամէն անգամ հազիւ 3-4-ի կը տրուի:

Քաղաքին մէջ մուտքը արգելւած է: Որ պահականոցին
որ կը հանդիպին՝ կամ կը բռնին կամ ետ կը ղզկին:
Անօթութենէ վար կ'իջնեն և սակայն թող չտրուի:

Այս խստութիւններու նպատակն է՝ յուսահատեցնել
ժողովուրդը, որպէս զի ցրւին: Արդէն սարերը ձիւնել է:
2-րդան մէջ ամէնքն ալ օրապահիկէ և զգեստէ զուրկ՝
ի՞նչ պիտի լինի լեռնցիներու վիճակը...

Այնտեղ ալ, ինչպէս Մշոյ դաշտին մէջ, չարաչար
տանջանքներով հաւաքեցին ժողովրդի զենքերը: Անոնք որ
զենք չեն ունենար, դրամական տուգանքի կ'ենթարկւին:

Ամսոյս 17-ին մի երեսնապետ թիւրք զինուոր սպան-
ւեցաւ յանկարծ Սասունում: Կառավարութիւնը այդ ալ
Ֆէդայիներուն վերագրեց, մինչդեռ Ֆէդայի չկար այն
կողմ. երեւի զինուոր զինուորին է զարնել:

Դա պատճառ եղաւ, որ չորս սասունցի երեւելիներ
բերեցան և բանա դրեցան: Բանա ըսելով պէտք է
հասկանաք մի կատարեալ դժոխք, ուր արագաբար կը
փճանան հարիւրաւոր հայ անմեղ երիտասարդներ: Տիֆի
սաստիկ հիւանդութիւն է տարածուի բանտերուն մէջ:
Վերջին տասը օրերուն մէջ 22 հայեր մեռան, որոնց
մէջ էր մեր յիշատակելի գործիչներէն մէկը՝ գերբե-
վանքի վարդանը, որ ձերբակալուելէն 15-20 օրէ վերջ
մեռաւ: 60-է աւելի հիւանդներ կան հայերէն և ամէն
օր կը մեռնին, որովհետեւ անկարելի է այն միջոցառ-
ումն մէջ շնչել ապրել...

Երեւակայեցէք մի աղտոտ, խոնաւ, դժոխային բնակա-
րան, ուր բացի 60-70 իսլամներէ՝ որոնք գրաւեր են 9
սենեակներէն 6-ը, 100 հայերուն մնացեր են ընդամենը
երեք նիւաւ սենեակներ. մարմին մարմին վրայ... Եւ
շատերը խոնաւ ու բաց սրահին մէջ, ցրտին ու գարշա-
հոտութեան ենթակայ: Մերիներէն ոչ մէկը կրնայ
պահպանել իր առողջութիւնը... Սասունէն իջնող թիւրք
զօրքերը տիֆով վարակուել են. բազմաթիւ զինուորներ
մեռան ու կը մեռնին: Բանտի սոսկումը սրածուծենէ
աւելի զարհուրելի է: Բազմաթիւ ձերբակալուածներու
ձեռք վարկած է կառավարութիւնը, այս անգամ պա-
տըրականով, թէ 15 հոգինոց Ֆէդայիներու մի խումբ է
գտնուած Մշոյ դաշտի հայ գիւղերու մէջ. հրամայուած է
ձերբակալել այն ամէն հայերը, որոնք հիւրընկալել են
անոնց:

Այս կողմերու հայ գործող երիտասարդ ուժերը փճա-
ցնելու համար՝ կառավարութիւնը ձեռնարկել է մի
սոսկալի գործի. տանջանքով առնուած զենքերու տէրերը
դատաստանի կ'ենթարկւին: Ինչպէս կը հաւաստեն,
1200-1400 հայերու կոչնագրեր զօղւած են՝ իբր յան-
ցաւորներ, իբր ապստամբներ դատի կոչուելու: Ի՞նչ պատիժ
պիտի տրուի այս բազմութեանը... Ո՛ր պիտի քշեն...

Կացութիւնը դառնացնող բաներէն մէկն ալ այս է,
որ կառավարութիւնը, կ'ըսեն, մտադիր է Մշոյ դաշտին
մէջ ևս զօրանոցներ կառուցանել...

Զարիքները անհաշիւ են. ո՞ր մէկին տոկալ և արդեօք
այսպէս իզուր կորչելու են այսքան արիւն ու տառապանք...

Մեր թղթակցութեան մէջ մերկացուած այդ սրտա-
ճմլիկ փաստերը Կ. Պօլսի լրագրի մէջ հաղորդուած են
ահա թէ ինչ ցինիկ ձևով:

«Կայսերական իրատէի մը համաձայն, Սասունի դաւա-
ռակին մէջ, Կէլիէկուպանի, Սէմալի և Տուպրի մուրդի
քերուն վրայ և Բիթլիի կառավարութեան ջանքով շինուած
զօրանոցներուն և աշտարակներուն բացման հանդէսները
կատարուած էին, և այս առթիւ ոչխարներ մորթուելով,
բարեմաղթութիւններ եղած էին կայսերական արեւադարձ-
ութեան համար: Մուշի պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ

կայսերական պալատան Բ. քարտուղար և սենեկապետ բարձր. Իզզէդ փաշա սեպտ. 26 թւակիր հեռագրով մը կայսերական բարձր գահաձեռնութիւնն ու բարեկեցութիւնն հաղորդած է Պիթլիի կուսակալութեան: Վսեմ. կուսակալն և նահանգին բոլոր պաշտօնատարներն ու երեւելիներն հեռագրով երախտագիտական ուղերձ մը մատուցած են կայսերական պալատ:

ԱՆՅՔԵՐԸ ՏԱՐՕՆԻ ՄԷՋ

(ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԱՏՐԱՐԱՐԱՐՈՒՄ)

25 յուլիս, 1904

Նախորդ շաբթւայնամակներով փութացեր էի յայտնել Մշոյ դաշտին մէջ նորոգւած սրտաձմիկ աղէտը, որուն զարհուրելի հետեւանքը հետզհետէ իր դառն ազդեցութիւնը կ'ընէ դաշտեցի հայոց ճակատագրին վրայ: Արկածաւոր գիւղերու ժողովուրդը տակաւին չհամարձակիր երթալ իր գլխակեր և արիացաւեր բնակարանները: Սոսկումն զատ, շարունակական սպառնալիքները և ամէն օր ժողովրդի կրած տուայտանքը զօրքերէ, քիւրդերէ, ոստիկաններէ և յն, յուսաբեկ ըրած են ժողովուրդը. հունձքին ատեն այս տագնապը տնտեսապէս աւելի քայքայիչ է: Հայ մշակը չհամարձակիր ելլել իր արօրն ու ափը: Ծանօթ հայահալած ոստիկանապետ Իզզէթ պէյ նորէն ոտքի վրայ է. 100-էն 150 ոստիկան զինուորներ գլխուն ժողովուած անդադար գիւղերու վրայ կը յարձակի, սոսկալի տանջանաց կ'ենթարկէ հայ գիւղացին և անոնց զենքերը կը հաւաքէ: Այս տեսակ հաւաքումներ ըրած է չորս հինգ օր ի Վարդենիս, Արտօնք, Շարց, Աւնիստ, Մկրագոմ և ին գիւղերէ. և շարունակ լաց, կոծ ու աղաղակ կը հասնին մեզ ամէն կողմէ. դաշտին մէջ տեղ տեղ քիւրդերու զինեալ խումբեր կը շրջին, կը կողոպտեն. գիւղէ գիւղ չերթցիր: Հայերը իրենց տուններուն մէջ պաշարւած են, քաղաքին մէջ ալ խանութները փակ են դեռ: Սուրբ Վարապետի վանքին շուրջն ալ վտանգաւոր խորտումներ կ'ըլլան ճպրանցի ցեղապետ Իպրահիմ պէյի և ուրիշ քիւրդերու կողմէ: Յեղափոխականներն ալ գործի վրայ են դարձեալ դաշտին մէջ և քանի մը խումբերու բաժնւած՝ կը շրջին: Թէպէտ իրենք երբեք նախադրածակ չեն եղած, բայց կառավարութիւնը միշտ պատուակ մը կը նկատէ ջարդերը շարունակելու աւելի խժգժարար: Անուղղակի միջոցներով աղաչած, թախանձած ու պաղատած ենք որ չերևին դաշտին մէջ, չտան պատճառ թշուառ ժողովուրդի նորանոր աղէտներուն, բայց ինչ օգուտ, ասոնք կ'ըսեն թէ քանի որ չէ ապահովւած և չէ երաշխաւորած ժողովուրդի խաղաղութիւնը պահանջւած բարենորոգումներով, իրենք մազի չափ չեն շեղեր իրենց սկզբունքէն: Մահ կամ բարենորոգում. ու յեղափոխականը չէ միայն որ զայն կը պահանջէ, այլ ամբողջ ժողովուրդը, որ այնքան յուսահատած է իր վիճակէն, կ'ուզէ քառութեան նոխազի պէս անտրտուն ընդունել ջարդերը, տոկալ նահատակութեան հոգեսարսուռ փորձութեան, մինչև որ ճար մը, դարման մը ձեռք բերուի: Այսպէս կ'աղաղակէ տարօնցին ու սասունցին և միանգամայն մահ կամ դարման մը. բնաւ աղդեցութիւն չեն ընել յորդոր և յուսատուութիւններ: Այս է միակ միջոցն կ'ըսեն, կամ թող բոլորովին սրէ անցունեն մեզ կամ թէ ազատեն. իրաց այս կացութեան մէջ կուսակալ պէյ օձիքէս բռնած բնաւ վազ չիգար, բացարձակապէս

կը պահանջէ, որ համաձայն իր գաղափարին՝ ուղղակի լրտեսութիւն ընելու ի վնաս ազգին, բան մը զոր բացէ ի բաց մերժեցի և պիտի մերժեմ, չնայելով որ տեսակ տեսակ սպառնալիքներ կ'ըլլան մեր դէմ:

Արդէն առաջին առթիւ երբ ձեր հեռագրական հրամանին վրայ ստանձնեցի այս պաշտօնը և իրենց ներկայացալ, Պուրանըն բաթրիքի Արթին բաբազ սըր, պէն սէնի գապուլ իթմէմ, ըսաւ. պատասխանեցի թէ Պենք հոգեւորականներս ալ տեսակ մը բարոյական զինուորներ ենք սրբազան պատրիարքին իշխանութեան ներքեւ, հրամայած է և պարտաւոր եմ համակերպիլ. ալ ինքը լուռ կեցաւ, չմոռնալով սակայն պաղ ու բարկացող վերաբերում մ'ունենալ դէպի յիս և ներկայացուցած խնդիրներուն: Այս մասին առանձին գրած եմ:

Վարօտելոց թիւը շատցաւ և 18,000-ի հասաւ. կացութեան երեսէն թշուառները կը շատնան միշտ ու մեր մտահոգութիւնները կը բազմապատկեն: Հայոց հունձքերը չարաչար վնասւած են արդէն, նոյնիսկ մնացածներն ալ արտերէն չին կրնար հաւաքել. աղքատութիւնը անսահման է հոս և ես կը սոսկամ մօտիկցող ձմեռէն. ի՞նչ պիտի ըլլայ մեր ժողովուրդին հալը: Չմեռան մէջ 3,000-ի չափ թշուառներ պիտի ունենանք. երբեք նպաստ և օգնութիւն չհասաւ, մեր ժողովուրդը եթէ ազատ մնայ իսկ մինչև աշուն, արդէն ձմրան մէջ սովէն պիտի ջարդուի ու ջնջուի: Ծար ու ճամբայ մտածեցէք:

Ուրիշ տարիներու պէս ամենեւին դիւրութիւն չկայ Տիարպէքի կամ Եգեսիա գաղմելու, ոչ որ կրնայ տեղէն շարժիլ. ես ինչ ընեմ. ի՞նչպէս դիմանանք այս լափող աղէտներուն: Չեր պաշտպանութիւնը, գթութիւնը, հովանաւորութիւնը կը հայցեմք. կամ օգնութիւններ հասուցէք կամ վերջնական պատասխան մը որ հաղորդեմ անոնց, ես ալ չմնամ պատասխանատու անոնց արեան և ջնջելուն:

Լսեցիք, թէ Բաղէշի անգլիական և Վանի ֆրանսական հիւպատոսները ամսոյս սկիզբները մեկնեցան աստի, մնացին առժամանակեայ կերպով Վանի անգլիական և Բիթլիզի ռուսական հիւպատոսները: Առաջինն ալ, որ երրորդ անգամ Սասուն պիտի երթայ, վերագարձէն ետք պիտի մեկնի. ուրիշ նպաստ անոր միջոցաւ կամ ուրիշի չէ տրւած սասունցիներուն, որոնք չարաչար թշուառութեան մէջ են. կըստանաք պատճէնը անոնց մէկ աղերսագրին, որ իրենց կացութիւնը կը բացատրէ:

Խարբերդի ամերիկեան հիւպատոսը մէկ երկու շաբաթէ ի վեր հոս է, քանիցս այցելեց մեզ, վաղը կը մեկնի Բաղէշ, յանուն կարօտելոց դիմումներ եղան, դեռ բան մը չէ ըրած, բայց խոստացած է գրել: Յանուն բոլոր ժողովուրդեան կը խնդրեմ ու կ'աղաչեմ որ բարեհաճիք ձեր միջնորդութիւնն ի գործ դնել Վ. Պօլսոյ ռուսական դեսպանին մօտ, որպէս զի անյապաղ հեռագրաւ հրաման հասցնէ տեղւոյս ռուսական հիւպատոս Շէրքովի՝ չմեկնել այս տեղէն, գէթ մինչև յառաջիկայ գարուն, անոր ներկայութիւնն խիստ կարեւոր է:

Թշուառ ծխացիներէն ոչ ոք կրցաւ քաղաքս հասնել մեզ հաղորդելու համար իրենց գեղի քստմանի կոտորածին մանրամասնութիւնը: Հիւպատոսներ հաւաստեցին թէ, խստիւ բողոքած են նոր կոտորածներու մասին, թերևս ձեզ մանրամասն տեղեկութիւններ հասած են Սղերդէն, Տիգրանակերտի առաջնորդէն՝ Պշերիկ գաւառին և Տիարպէքի մաս մը գիւղերու մէջ պատահած նպա-

նութիւններու և աւարառութիւններու մասին: Պատահական այցելու մը պատմեց մեզ, թէ ամսոյս սկիզբները Պշիբիկի ութ հայ գիւղեր աւերած, թալանած, բնակիչներ ցրած և թէ այն կողմերու բազմաթիւ հայ գիւղեր աւարառութեան ենթարկւած են:

(Ստորագրութիւն)

Խ Ղ Խ Ի Կ Ի Զ Ի Ի Խ Ի Ի Դ Դ Ի Ի

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Խ Ա Բ Բ Ե Բ Գ Ի Շ Բ Ձ Ա Ն Ի

(Շարունակ. № 9-ի)

Խարբերդ, 8/21 մայիս

Վրէսէինք թէ մայիսի մէջ սկսան խուզարկութիւնները. այո՛, և շարունակեցան մինչև յուլիսի 7, երբ այս վերջին ամսուն 20-ին կ'աւարտէր «նախնական քննութիւն» ըսածը: 26 բազմաթիւութիւններու համագումար թիւն էր 35, որոնցմէ մեծագոյն մասը մինչև մէկ ամիս ամէն յարաբերութենէ զրկւած մնաց (իսթեղաթաէն մէն): Ընենք հիմա տանջանքներու թուումն մասանց:

Յարու թիւն Սէմէրճեան. — Համետագործ, մէկ զաւկի հայր, 32 տարեկան. երեք օր գիշեր ցորեկ անխնայ ծեծի ենթարկեցաւ, երբ իր հանգըստի ժամերուն կինը կ'ենթարկէր նոյն պատիժներուն ու ծեծին, որուն օգնութեան աղաղակներն ու վայնասունը աւելի վայրագ պատիժ մըն էին իրեն: Ամենէն ետքը իր կինը իր իսկ աչքերուն առջև պղծեց գոմիսէր Համսին: Երեք օր ետքը ծեծի տակ երբ նւաղած էր, մեռած կարծւելով և պատասխանատուութենէ մը ազատ գտնւելու համար՝ պատուհանէն վար նետուեցաւ փօղիս Գատրիին ու ԱՏմէտին կողմէն և կինն ալ վիրաւոր ու անպատուած տուն վերադարձաւ:

Սևաղցի Սերոբ. — 38 տարեկան, բազմանգամ ընտանիքի հայր, Սէմէրճեան Յարութիւնի ջորեպան ընկերը. — ութ օր անընդհատ ամենասաստիկ ծեծի ենթարկւած, մէկ գիշերը 200 հարած համրւած է, և ամիս մը չափ ամէն յարաբերութենէ զրկւած: Ցանջանքն այն աստիճանի հասած, որ այլևս ոտքի վրայ կենալու անկարող եղած է և զինքը ձէմիշ տանել բերելու համար՝ ոտքէն չուան ձգած և ութ օր այսպէս դիակի նման քաշած տարած են:

Գարահիսարցի Յարէթ. — 26 տարեկան, ամուրի, բայց որը եղբայրներու ու քոյրերու և այրի մօր մը հոգովը ծանրաբեռնւած, Սէմէրճեանի ջորեպան միւս ընկերը, Յակոբի հաւասար խոշտանգում կրած:

Վարապետ Թաշճեան. — Հիւսէյնիկ աւանէն, վաճառական, ընտանիքի հայր, 35 տարեկան. վեց օր քնատ մնացած և չարաչար ծեծ կերած: Ամիսի մը չափ ամէն յարաբերութիւններէ զրկւած:

Աւետիս Թաշճեան. — Վարապետի եղբայրը, 27 տարեկան, ամուրի և իր եղբօր տանջանքը բաժնած:

Յարու թիւն Թաշեան. — Վերի երկուքին միւս եղբայրը, 30 տարեկան, ամուսնացած. հինգ

օր քնատ մնացած և ամիս մը ամէն յարաբերութիւններէ զրկւած:

Խաչատուր 2 ու լճեան. — Խարբերդէն, 20 տարեկան պատանի մը. վեց օր ամենասաստիկ տանջանքի ենթարկւած և ամիս մը ամէն յարաբերութենէ զրկւած:

Հաճի Սեդրակ Սէմէրճեան. — Յարութիւնի խանութի ընկերը, 30 տարեկան, ամուրի, բայց որը քոյրերու և այրի մօր մը հոգովը ծանրաբեռնւած. ութ օր խոշորանգւած, քնատ մնացած և բոսն օրէն աւելի ամէն յարաբերութենէ զրկւած:

Աճամբեգեան Տիգրան. — Արապկերցի, 18 տարեկան, ամուրի. վեց օր ծեծի ենթարկւած, անօթի ու ծարաւ մնացած, շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկւած:

Արապկերցի Սիսակ. — Ամուրի, 27 տարեկան, 7 օր անխանոցը մնացած, անօթի ծարաւ և տանջանքի ենթարկւած:

Առաքել Գազանճեան. — Խարբերդէն, 17 տարեկան պատանի մը. չորս օր ծեծի ենթարկւած ու ամիս մը ամէն յարաբերութենէ զրկւած:

Տիգրանակերտցի Գէւորգ. — Խարբերդէն, հիւսն, ամուսնացած, 30 տարեկան, ծեր հօր մը և մօր մը խնամածուն. վեց օր փայտատան մէջ անօթի ծարաւ ու քնատ մնացած, ենթարկւելով շատ գիշերներ ծեծի, շաբաթներով ամէն յարաբերութենէ արգելւած:

Խուրի Խաչօ. — Խարբերդէն, 65 տարեկան սպիտակ մազերով ծերունի մը ու կորաքամակ. շաբաթ մը անօթի ու քնատ մնացած, ամէն յարաբերութենէ արգելւած:

Փիթէ Գէւորգ. — Աղվան գիւղէն, 55 տարեկան, երկրագործ, միւսնոյն տանջանքներուն ենթարկւած:

Փիթէ Սարգիս. — Գէորգին տղան, 28 տարեկան, ամուսնացած, հօրը տանջանքներուն բաժնեկից:

Փիթէ Վարդան. — Գէւորգին տղան, 24 տարեկան, հօր և եղբօրը տանջանքներուն ընկեր:

Նիկողոս Թէնեքեան. — Խարբերդէն, 38 տարեկան, բազմանգամ ընտանիքի հայր և Ամերիկեան գօլէճի ուսուցիչներէն, միւսնոյն ատեն Խարբերդի բողոքական հասարակութեան ազգայետ. ամիսի մը մօտ յարաբերութենէ զրկւած և գիշերները քնատ թողւած ըլլալով՝ մօթին հաւասարակշռութիւնը կորսնցուց և ցնորական վիճակ մը առաւ:

Առաքել Գալանճեան. — Խարբերդէն, 17 տարեկան պատանի մը. չորս օր ծեծի ենթարկւած, անօթի ու ծարաւ: Շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկւած:

Խուրի Յովհաննէս. — Խաչօյին տղան, 18 տարեկան. հօրը տանջանքներուն բաժնեկից և ընկերը:

Յովհաննէս Վազասեան. — Մեղերէն, 18 տարեկան, ուսուցիչ. երկար օրեր քնատ մնացած ու տանջանքներու ենթարկւած, շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկւած:

Լեոն Միսաքեան. — Մեղերցի, 40 տարեկան, բազմանգամ ընտանիքի հայր, հին ազնւական տան մը զաւակ, ութ օր անխնայ ծեծ կերած,

անթի ու ծարաւ, ամիս մը ամէն յարաբերու-
թենէ արգելած:
Տ է մ ի Ր Ճ ի Ա Ր Ր ա Տ ա մ. — Մէզերէն, 48 տա-
րեկան, բազմանդամ ընտանիքի հայր, ութ օր
ծեծւած, ամիս մը քնատ և ամէն յարաբերու-
թենէ զուրկ մնացած:

Ասոնք միայն այն բանտարկեալներն էին, որոնք խստա-
գոյն տանջանքներու և պատիժի ենթարկեցան, որոնցմէ
զատ հետեւեալներն ալ առաւել կամ նազ նեղութեան
օրեր ունեցան, շաբաթներով խիստ հսկողութեան են-
թարկւած և գիշերներով քնատ թողւած ըլլալով:

Ս ս տ ու Ր ժ ա մ ա կ ո չ ե ա ն. — Մեզերէն, փաս-
տաբան, գաւառական ժողովոյ բ. ատենապետ և ան-
դամ քողաք. ժողովոյ, բազմանդամ ընտանիքի հայր:
Յ ո վ հ ա ն ն է ս Յ ա Ր ու թ իւ ն ե ա ն. — Խար-
բերդէն, գրագէտ, ուսուցիչ, բազմանդամ ընտա-
նիքի հայր և գաւառական ժողովոյ անդամ:

Մ կ Ր տ ի չ Տ. Ս տ ե փ ա ն ե ա ն. — Մեզերէն, գե-
ղագործ, գաւառական ժողովոյ բ. ատենապետ և
բազմանդամ ընտանիքի հայր:

Ռ ու Ր է ն Ջ ա Ր գ ա Ր ե ա ն. — Մեզերէն, ուսու-
ցիչ և գրագէտ, գաւառական ժողովոյ ա. ատե-
նապետ և բազմանդամ ընտանիքի հայր:

Գ ե Ղ ա մ Մ ու շ ե Ղ ե ա ն. — Խարբերդէն, ուսուցիչ
քափուշին հայերու վարժարանին, ընտանիքի հայր:

Կ ա Ր ա պ ե տ Գ ա լ ու ս տ ե ա ն. — Խարբերդէն,
վաճառական, ընտանիքի հայր:

Յ ա Ր ու թ իւ ն Ջ ե Ր ա գ ե ա ն. — Արապկերցի
վաճառական 22 տարեկան:

Ս իւ Ր ս իւ Ր ց ի Պ ո Ղ ո ս. — Ամուրի մշակ:

Գ ա ո ն ի կ Տ. Բ ա Ղ գ ա ս ա Ր ե ա ն. — Խարբերդէն,
վաճառական, 20 տարեկան:

Պ ե տ Ր ո ս Ս ա հ ա կ ե ա ն. — Իզմէ գեղէն, Ամե-
րիկեան գօլէճէն շրջանաւարտ, 22 տարեկան:

Մ ի ս ա Ր Ա զ ա տ ե ա ն. — Արապկերցի, 22 տարե-
կան, կօշկագործ:

Փ ի Ր ե ց ի Հ ա մ բ ա Ր ձ ու մ. — Աղքատ գործաւոր
մը, ընտանիքի հայր:

Յ ա կ ո Ր Ֆ է Ր մ ա ն ե ա ն. — Խարբերդէն, վաճա-
ռական, ընտանիքի հայր:

Խարբերդի առևտրական շէնքը՝ ուր լեցած մնացին
ասոնք մէկ երկու ամիս, սպասելով նախնական քննու-
թեանց աւարտման՝ դարձել էր ժանտատեսիլ սպանդա-
նոց մը, ուրկէ գիշերները տանջանքի ենթարկւած զո-
հերուն աղաղակները կը լսւէին՝ խառն հարւածներուն
բիրտ ձայնին ու գահիճներու յիշոցին: Կառավարութեան
բոլոր պաշտօնական գործերը ընդհատեցան ամիսնե-
րով. թիւրք խուժանին ամենէն վտանգաւորները միայն
կայնել էին պահ պահ ցորեկները այս ու այն սենեակը,
ստուգելու համար թէ նոր ձերբակալածներ կային
թէ որոնք էին ատոնք, անոնց մէջ արդեօք գեղադէմ
պատանիներ կը գտնուէին, որպէս զի գիշերային այցե-
ութեանց համար իրենց կանխապատրաստութիւնն ունե-
նան ու սօթթաներ, պաշիպօղուք սրիկաներ դրսէն կը
միջամտէին քննութեանց ու կը մասնակցէին տանջանք-
ներու տնօրէնութեան, յոգնած փօլիսներու ձեռքէն
իրենք առնելով փայտն ու շարունակելով հարւածները:
Ասոնց մէջ կ'արժէ նշանակել հասաս պաշի Շիւբրին,
որ նշանաւոր սրիկայ ու գող մըն է:

Անկարելի պիտի ըլլար մանրամասնութեամբ գրել հոս
բոլոր այն չարչարանքները, որ կրեցին այդ անմեղ զոհերը,
որոնցմէ մեծագոյն մասը դեռ մինչև դատարան չ'ելած,
չէր գիտեր թէ ի՞նչ յանցանքով ձերբակալւած է և ի՞նչ
բանի համար: Յուլիսի և օգոստոսի ամենասաստիկ տապին
այդ 35 անձերը ամիսէն աւելի սպասեցին նաև Խար-
բերդի պզտիկ բանտին մէջ իրարու վճայ լեցած, շունչ
առնելու իսկ անկարող: Այս բանտին մէջ ալ դեռ շա-
րունակեցաւ նոյն խստութիւնը, որպէս զի դրսէն ծնողքի
կամ մօտաւոր ազգականի հետ խօսակցութիւն չ'ըլլայ
և ասով կատարւած անգթութիւնները գաղտնի մնացած
ըլլան և անոնց թողած սպիները անցնին:


Սակայն բանտարկեալները միջոց գտան և թէ գրա-
ւոր կերպով թէ հեռագրով բողոքեցին դատական քննիչ
Համիդ պէյին, կուսակալին և վերաքննիչ ատենի նա-
խագահին, պահանջելով որ բժշկական քննութեան մը
ենթարկին իրենք: Դատական քննիչը երբէք իր օրերուն
բժիշկ չ'ըզկեց, այլ բանտարկեալներուն Մեզերէի կեդ-
րոնական բանտը փոխադրելէն ետքը միայն հաճեցաւ
բժիշկներ ըզկել, երբ բողոքած թւականին 20-25 օր
անցած էր արդէն, բայց և այնպէս շատ սպիներ դեռ
թարմ էին և ծեծին հետքերը կը մնային: Սակայն Համիդ
պէյ սպառնալիքի տակ՝ թող չտուաւ որ բժիշկները ճըշ-
մարտութիւնն ամբողջովին տեղեկագրեն, ինչ որ հաս-
տատեցաւ ետքէն, նոյնիսկ դատարանին առջև, երբ
բժշկական քննիչ Մրթազա էֆէնտի վկայութեան կան-
չեցաւ: Արանչիլի նիստ մըն էր ատիկայ, ուր խառն
բազմութեան մը առջև ու նոյն ինքն Համիդ պէյի ներ-
կայութեանը, Մրթազա չի կրցաւ վերջապէս ծածկել
իրեն եղած սպառնալիքները:

Սոսկալի ու վայրագ ցոյց մըն էր, երբ Խարբերդի
բանտէն ձերբակալւածները յուլիս 20-ին Մեզերէի
բանտը փոխադրեցան, ութը կամ տասնական հոգիով
թե թե կապւած ամէնքն ալ, շրջապատւած սուրնաւոր
հրացանակիր զինուորներէ, որոնց առջևէն կը քալէին
պինպաշի Մուրատ պէյ և Ֆէթթահ էֆէնտի: Ամբողջ
Խարբերդի բնակչութիւնը՝ թիւրք թէ հայ, խռնւած էր
շուկաները կամ ճամբաներուն վրայ և գոռհ կուտար,
թիւրքերը սպառնալից, մոլեգնած, կրճտելով իրենց ա-
ռանները, հայերը՝ իրենց հոգիէն վիրաւոր, գլխահա-
սարսափահար ու արտասուալից, որովհետև կը տեսնէին
իրենց քաղաքին ամենէն պատուաւոր ու անմեղ մարդիկը՝
ողբալի ծանականքի մ'ենթարկւած:

Դատավարութիւնը տեւեց մօտաւորապէս վեց ամիս,
որուն ընթացքի մէջ, չի մոռնալ ըսելու թէ, Գարա-
հիսար քաղաքէն ալ եօթ և Աղճնէն ալ մէկ հոգի
բերեցան՝ աւելնալու համար այստեղի ձերբակալւած-
ներուն վրայ, քանի որ երկու ջորեպանները Յակոբ և
Յարէթ Գարահիսարի կողմերէն էին և իրենց ճամբորդ-
ները այդ կողմերէն կը փախցնէին:

Երբէք դատավարութիւն մը այսքան խայտառակու-
թեամբ երևան եկած չէ ունէ երկրի մը մէջ և այսքան
բարձրաձայն աղաղակած չէ՝ զգուշի բռնակալութեան մը
անգթութիւնները:

(Աւերջը միւս ամսում)



Վ Ա Շ Ա Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն

Ո՛վ կարող էր գուշակել, որ այդ համեստ, լռիկ երիտասարդը իր հանդարտ, անյուզ տեմպերամենտով կը նետուէր յանկարծ կեանքի ամենայնորձանուտ հոսանքի մէջ, կը դառնար Սասունի դիւցազնեղբայրութեան ամենապատկառելի դէմքերից մինը:

Նա մի պարզ ուսուցիչ էր Բուլղարիայի հայ դպրոցներում՝ դեռ ընդամենը երեք տարի սրանից առաջ: Եռանդուն մասնակցութիւն ունենալով բոլոր գործերում՝ նա իրեն հեռու էր պահում տեղական կեանքի գծում արտայայտութիւններից, իր պարկեշտ բնաւորութեամբ վայելում էր ընկերների սէրն ու համակրանքը:

Նա շատ սիրւած էր տակաւին Կ. Պօլիս եղած ժամանակ, ուր սկսել էր իր յեղափոխական աշխատանքը, որպէս գործակից ընկեր անմոռանալի Բարկէնի:

1901 թւի աշնան վահանը հրկիր անցաւ, աշխատակցեց մի առժամանակ Գ.ին Վանում, ապա բարձրացաւ Սասուն, ուր գործերի վիճակը պահանջում էր նրա պէս լըջմիտ, խոհուն ու շքահայեաց մէկի ներկայութիւնը: Ընտրւած Պատասխանատու մարմնի անդամ՝ վահանը կարճ ժամանակամիջոցում մեծ գործ տեսաւ. իր հեղինակութեամբ լռեցրեց մանր անձնական կրքերը ֆէդայիների շարքերում, հաշտեցրեց գժուածներին և, կարելի է ասել, ինքն իր ջանքերով կազմակերպեց յեղափոխականների մի ձոր՝ բանակ: Խորհրդակցական ժողովներ կազմեց Սասունի ժողովրդի մէջ, ծրագրեր սկսեց և առհասարակ մեծ զարկ տւեց ինքնապաշտպանութեան գործին:

Թղթակից «Դրօշակի» նա տեղեկագրում էր առօրեայ հարստահարութիւնները, խօսում էր գալիք փոթորիկների մասին, կանչում էր դէպի երկիր՝ արտասահմանի հայ երիտասարդներին, ոգևորում էր գործով և չափազանց երջանիկ էր զգում իրեն կուրի ու տառապանքի աշխարհում:

Եկան և փոթորկի օրերը: Վահանը իր ընկերների հետ առաջնորդում ու խրախուսում էր ժողովրդին: Կռիւր բորբոքւած՝ նա շարունակում էր թղթակցել «Դրօշակին», տեղեկագրում էր ընդհարումների յուզիչ մանրամասները:

Ապրիլ 14-ի նամակով անհուն դառնութեամբ վահանը գուժում էր Հրայրի մահը. «Իր կարմիր մահը կարմիր մելանով գրեցի», — հաղորդում էր նա:

«Վաղը թերեւս նոր կուի ունենանք: Եթէ յաղթւինք, և Սասունը ոչնչանայ, թող ուրիշներ լուծեն մեր վրէժը», — այդպէս էր վերջացնում նա ապրիլի 14-ի իր նամակը:

Եւ դա վահանի վերջին նամակը եղաւ... Չայնը լռեց, բեղուն, արագասահ գրիչը կանգ առաւ:

Ամիսներ անցան — և վահանի մասին ոչ մի ստոյգ տեղեկութիւն: Չարագուշակ լուրերը տեղում էին իրար ետեւից, բայց երկար ժամանակ չէինք ուզում հաւատար...

Ո՞ր ժայռի տակ, ո՞ր խողովի կամ ձորի մէջ է հանգստանում այժմ թանկագին ընկերոջ գնդակահար դիակը, — յայտնի չէ: Բայց լոկ հողեղէն գերեզմաններով չեն յաւերժանում գաղափարի առաջամարտիկները: Վահանի գերեզմանը Սասունն է, մարտիրոսութեան և հերոսութեան վայրը, ուր ազատախոհ սերունդները միշտ նւիրական պաշտամունքի պէս կը պահեն, կը գուրգուրեն Վահանների անրիժ յիշատակը:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍՏԵՐԻԱՄԻ ԿՕՆԳՐԵՍՐ

III

Կարլ Կառլսկոն յանձնեց դժւարին պարտականութիւն—1900 թւի Պարիզի կօնգրէսին — խմբագրել մի այնպիսի որոշում, որը ընդմիշտ լուծէր «միստրական» կնճռոտ խնդիրը և վախճան գնէր սօցիալիստական երկու թեւերի — գէդիստների ու ժօռէսիստների — սպանիչ կոհեմներին:

Մարքսիզմի հռչակաւոր թէօրիտիկոսը, որ սովորաբար մոլեռանդ պաշտպան է հանդիսանում վարդապետութեան սկզբունքն երի՝ անկարող եղաւ և չուզեց ներկայացնել մի բացարձակ ու յստակ որոշում: Նրա խմբագրած բանաձևը թէև մերժում էր «միստրական» և մշտական դաշնակցութիւնները տիրող կուսակցութիւնների հետ, բայց և յայտարարում էր, ի մեծ պարմանս գէդիստների և ուղղափառների, որ բացառիկ պարագայերում, ծանր վտանգների դէմ կուեղու համար՝ սօցիալիստը կարող է ժամանակաւորապէս ընդունել միստրական պաշտօն, համաձայնութեամբ իր կուսակցութեան մեծամասնութեան:

Դժւար էր ներկայացնել դրանից աւելի բաւարար որոշում: Ընդդէմ է, նա երկսայրի էր ու առաջական — քանի որ «բացառիկ պարագաների» հասկացողութիւնը կարող է տարբեր լինել տարբեր անհատների ու կուսակցութիւնների մէջ — բայց այդ որոշումը համապատասխան էր իրականութեան պահանջներին:

Եւ Կառլսկոն բանաձևը ընդունեց ձայների ահագին մեծամասնութեամբ. դա գործնական կեանքի յաղթանակն էր՝ ծայրայեղ ու ամուլ վարդապետականութեան (գօթրիներօրութեան) դէմ:

Ժիւլ Գէդ և իր ընկերները դժգոհ մնացին: «Սօցիալիստը երբէք, ոչ մի պարագայում չպէտք է մտնէ կառավարութեան մէջ» — ասացին նրանք և այդ մտքով առաջարկեցին մի նոր բանաձև: Բայց դրա համար ձայն տուեց միայն չնչին փոքրամասնութիւն:

Կառլսկոն ըստ երևոյթին հաշտարար բանաձևը չհասաւ իր նպատակին: Պարիզի կօնգրէսը չհաշտեցրեց երկու կուռղ բանակները. ընդհակառակը, վիհը աւելի ևս խորացաւ երկուսի մէջ, չնայած ժօռէսի անդուլ ջանքերին, որը շարունակ ուժերի միացման հրաւեր էր կարգում: Ժօռէս համակերպեց կօնգրէսի որոշման, Գէդը ըմբոստացաւ և շարունակեց իր արշաւանքը ժօռէսեանների դէմ: Նա քաջալերեց, թէ առաւ մանաւանդ անցեալ 1903 թւի Դրէզդէնի կօնգրէսից յետոյ, ուր գերմանական Սօցիալ-դէմօկրատիան Բէքէլի ճառերի ազդեցութեան տակ՝ ճնշող մեծամասնութեամբ ընդունեց մի որոշում, ուղղած Բերնշտայնի և «րէվիզիօնիզմի» դէմ:

Ժիւլ Գէդ միանգամայն նպատակայարմար գտաւ, որ այդ որոշումը ենթարկէր Ամստերդամի միջազգային կօնգրէսի քննութեան, որ նա տարածէր բոլոր երկրներին վրայ, քանի որ նրանով դատապարտւում էր և իր հակառակորդ ժօռէսի տաքտիկը:

Այդ վերջինին նա գնում էր միևնոյն տախտակի վրայ Բերնշտայնի հետ, թէև լաւ գիտէր, որ մեղանշում էր արդարութեան դէմ: Ժօռէս տարբեր է Բերնշտայնից՝ թէ իր աւելի արմատական հայեացքներով, թէ աւելի յեղափոխական տեմպերամենտով, — և հայեացքների այդ

տարբերութիւնը նա քանիցս շեշտել է Ֆրանսիայի սօցիալիստների առջև, մամուլի ու հրապարակային ժողովների մէջ:

Եւ ահա Ամստերդամում նորից բոլորեց երկու ուղղութիւնների յաւիտենական վէճը. նորից փոխադարձ խարազանումներ՝ միջազգային սօցիալիստական առեանի առջև: Մի ճշմարիտ մենամարտ, որի նմանը երբէք չէր տեսնւած սօցիալիզմի միջազգային կօնգրէսներում: Փոխի փոխ բեմ էին նետւում երկու ամենափայլուն, աշխարհահռչակ հետորները, միջազգային սօցիալիզմի երկու ամենաընտիր պարագլուխները, որոնցից իւրաքանչիւրը պաշտպանում էր իր ջոկ տաքտիկը և պերճախօսութեան ուժգին թափերով ձգտում էր տապալել հակառակորդին:

Երկու հետորները — Բէքէլ և Ժօռէս — տարբեր էին իրենց խառնածքով, մտաւոր ու հոգեկան կարողութիւններով: Բէքէլ հուժկու ագիտատոր է, քաջ բանակուող, կուսակցութեան առաջնորդ (Parteiliter), բայց նա չունի ժօռէսի գիտական պատրաստականութիւնը, նրա սեղմ, կարող տրամաբանութիւնը, նրա պատմական, փիլիսոփայական լայն ծանօթութիւնները: Նա գերմանական չօլայի հետոր է և չունի նաև ժօռէսի ահագին տեմպերամենտը, նրա խօսքի ուժը, նրա հսկայական թռիչքները:

Բէքէլ, որ պաշտպանում էր օրթօգօքս ուղղութիւնը՝ այսպէս անւանւած «միստրական սօցիալիզմի» դէմ, յաճախ չարաչար վերադասներ էր գործում և նսեմանում էր ժօռէսի առաջ, նոյնիսկ օրթօգօքսներից շատերի աջքում: Այդպէս, օրինակ, քննադատելով ժօռէսի աջակցութիւնը Ֆրանսիական հանրապետական կառավարութիւններին՝ նա կրկնում էր, նոյնիսկ չափազանց նելով, Ժիւլ Գէդի մի անհեթեթ կարծիքը՝ թէ սահմանադրական միապետութիւնը — անգամ պրուսականը — շատ առաւելութիւններ ունի հանրապետութեան դիմաց...

Մի անմտած, անզգոյշ յայտարարութիւն՝ որ չէր կարող տպաւորութիւն անել լուրջ ունկնդիրների վրայ: Ժօռէս իրաւունք ունէր ասել, որ դա լուրջ պատճառաբանութիւն չէ, այլ պօղեմիկական մի խաղ. նա իրաւունք ունէր փաստաբանելու հանրապետութեան դատը և խարանելու պրուսական միապետութիւնը, ուր դեռ իշխում է բիսմարկեան ոգին, ուր Սօցիալ-դէմօկրատիան՝ չնայած իր անսովոր աճման ու յաղթական ազդեցիկներին՝ մինչև օրս չէ համարձակւում գումարել սօցիալիստական միջազգային կօնգրէս, երկիւղ կրելով, որ պրուսական բիրտ ոստիկանութիւնը ռուսաց ժանդարմների ձեռքը կը մատնէ ռուս, լեհ և ուրիշ սօցիալիստ պատւիրակներին:

Ժօռէսի ձայնը այդ կէտում ճնշող էր. ջախջախիչ հակառակորդների համար. նա աւելի ևս հեռու գնաց յարձակողականի մէջ՝ և արտասանեց մի թունաւոր մեղադրական՝ Գերմանիայի Սօցիալ-դէմօկրատիայի դէմ: «Դուք չունիք — ասաց նա, դիմելով Բէքէլին և գերմանական օրթօգօքս պատգամաւորներին — դուք չունիք ոչ յեղափոխական աւանդութիւններ, ոչ էլ պարլամենտական ուժ»... Եւ այդ ոգով առաջ գնաց հռչակաւոր տրիբունը, որ անզուսպ կատաղութեամբ, բայց միշտ բարձր, արժանաւոր տօնով, առանց մանր կրքի ու կուսակցական բծախնդրութեան, հարւածեց ուղղափառ Սօցիալ-դէմօկրատիայի մեղկութիւնը, յեղափոխական կորովի

պակասութիւնը, բռնի ուժի առջև դիւրաւ համակերպելու տրամադրութիւնը:

Հարւածները շեշտակի էին. արդարեւ, զարմանալի է այն հակասութիւնը, որ նկատուում է գերմանական Սօցիալ-դէմոկրատիայի թւական ուժի և յետագային համալսարանի միջև. զարմանալի է, որ Սօցիալ-դէմոկրատիան լինելով ամենահզօր կուսակցութիւնը կայսրութեան մէջ, ունենալով երեք միլիօնի չափ ընտրողներ և ութսունից աւելի պատգամաւորներ պարլամենտում, անկարող է հանդիսանում՝ ազդու և կերպով դիմագրելու պրուսական ռէժիմի այլանդակութիւններին, խօսքի ու մամուլի ազատութեան դէմ հանած սահմանափակումներին, փոքր ազգերի դէմ կազմակերպած վայրենի հալածանքին ևն, ևն:

Չորս օրւայ տենդային բանակուից յետոյ՝ մեծամասնութեամբ 25 ձայների ընդդէմ 17-ի — քուէարկութիւնը կատարուում էր ըստ ազգայնութեան — կօդգրէսը ընդունեց Դրէզդէնի որոշումը, որը մերժում է «րէվիզիօնիստական» (վերաքննական) ձգտումները, մերժում է մանր ռէֆորմների քաղաքականութիւնը, արգելում է սօցիալիստներին կազմել յարատե դաշնակցութիւններ բուրժուա-ռամկավար կուսակցութիւնների հետ, արգելում է նրանց «ձգտել մասնակցելու կառավարական իշխանութեան մէջ՝ բուրժուա հասարակութեան շրջանակներում»:

Այդպէս որոշեց տաքտիկի հարցը Ամստերդամի համաժողովում: Սակայն ո՞ւմ է նա պարտաւորեցնում... Վարելի է ասել՝ ոչ ոքի: Իւրաքանչիւր երկրում սօցիալիստ կուսակցութիւնը կամ կուսակցութիւնները պիտի շարունակեն գործադրել այն տաքտիկը, որը նրանց թւում է աւելի համապատասխան իրենց կեանքի ուրոյն պայմաններին: Միջազգային կօդգրէսների՝ տաքտիկի վերաբերեալ վճիռները մեծ մասամբ դատապարտւած են մնալու իբրեւ «սկզբունքի ծանուցումներ», լոկ թէօրիական ազդարարութիւններ՝ առանց գործնական լուրջ նշանակութեան: Ժօռէսի կուսակցութիւնը, ինչպէս և սօցիալիստական մարմինները Բելգիայում, Նորվեգիայում, Էվէյցարիայում և ուրիշ ռամկավար երկրներում, որոնք ձայն տւին Դրէզդէնի որոշման դէմ՝ չպիտի շեղեն իրենց փորձած, օգտակար ձանաչած տաքտիկից. նրանք պիտի շարունակեն մշտապէս աջակցել ռամկավարական — թէկուզ «բուրժուա» — կուսակցութիւններին ու կառավարութիւններին, քանի որ տեսնում են, որ այդ աջակցութեամբ չէզոքացնում են ռէակցիայի ուժը, յաղթահարում, յետ են մղում միլիտարիզմի, կղերականութեան չարիքները, զարկ են տալիս ազատութեան ռէժիմին բոլոր ասպարէզներում և նւաճում են աւելի և աւելի խոշոր ռէֆորմներ ի նպաստ աշխատաւոր ընդհանրութեան:

Կեանքը «թէօրիաներից» աւելի ուժեղ է և կեանքի հրամայական պահանջն է, որ ծնունդ է տալիս Ժօռէսներին: Պրօլետարիատը, խեղճ, հալածւած ընդհանրութիւնը չէ գոհանում ֆօրմուլը ներքով, հեռաւոր ապագայի հրապոյրներով, — նա պահանջում է իրական փաստեր, նա ուզում է վայելել սօցիալիստական շարժման բարիքները հէնց ներկայումս:

Ամէն մի կուռղ կուսակցութիւն պիտի ունենայ, անշուշտ, իր ղեկավարող սկզբունքները, իր սօցիալական-քաղաքական դաւանանքը, — իր թէօրիաները: Բայց «դօքտրիններութիւնը», վարդապետութեան նեղսիրտ

պաշտամունքը անհամակրելի է և հակայեղափոխական: Նա կարող է յանգել անցանկալի ծայրայեղութիւնների, նա տանում է յաճախ դէպի կուսակցական առանձնացում, դէպի անգործութիւն ու անկարողութիւն, դէպի հրաժարում կեանքից, կուռից, փոթորիկներից: Այդպիսի մի այլանդակ ծայրայեղութեան էր հասել Դրէյֆուսեան ահաւոր ճգնաժամի ընթացքում ֆրանսիական Գէդիստների կուսակցութիւնը, որը, ինչպէս տեսանք, այն ժամանակ ձեռնպահութիւն էր քարոզում սօցիալիստներին, յայտարարելով, որ կռիւն բուրժուազական է, որ իր՝ Գէդիստ կուսակցութեան համար միւսնոյն է՝ լինի երկրի մէջ հանրապետութիւն, թէ սահմանադրական միապետութիւն, լինի երկրի գլուխը մի Լուրէ, թէ մի Ալիէ:

Այդ վնասակար անհեթեթութիւնը, որ կուսակցական կրքի արդիւնք է, այսօր ջրած է արդէն: Ժօռէսից յետոյ լուեց գերմանական «ուղղափառութեան» կենտրօնական օրգան՝ Vorwärts-ի հեղինակաւոր ձայնը, որը վայրոյթով դատափետեց Գէդի ու Բէքէլի խախուտ պատճառաբանութիւնը և արդարացրեց Ժօռէսին: Նա նշաւակեց Գէդի անտարբերութիւնը կղերականութեան և միլիտարիզմի դէմ յայտարարւած կուռում և հասկացրեց, որ գերմանական Սօցիալ-դէմոկրատիան ոչ մի առնչութիւն չէ կարող ունենալ Ժիւլ Գէդի հետ:

Ո՞վ զարմանք... Vorwärts այսօր աւելի հեռու է գնում Ժօռէսի օգտին արած իր փաստաբանութեան մէջ: Քիչ առաջ միսիստրական թեթեւ ճգնաժամ էր ֆրանսիայում. Կոմբի արմատական կառավարութիւնը, զինւորական միսիստրի մի քանի ծանր վրիպումների շնորհիւ՝ մի վայրկեան յայտնեց անկման վտանգի մէջ: Ժօռէս զգաց վտանգի ծանրութիւնը և բեմ-դուրս եկաւ պարզեց ներկայ միսիստրութեան արած ու անելիք ծառայութիւնները, նկարագրեց և նրա տապալման հեռապատկերը, ուժգին կոչ արաւ ձախակողմեաններին և, կարելի է ասել, փրկեց միսիստրութիւնը:

Տառամուղ ուղղափառները դարձեալ որոտացին «բուրժուա» Ժօռէսի դէմ, Կառլեկի գրեց դարձեալ մի շանթարձակ մեղադրական, իսկ Vorwärts ծափահարեց Ժօռէսին...

Այո, կեանքը ուժեղ է թէօրիաներից... Ժօռէսը պաշտպանում է և չէ կարող չպաշտպանել մի միսիստրութիւն, որի նմանը ֆրանսիան չէ ունեցել և որը կղերականութեան ամէհի վիշապին խոնարհեցնելուց յետոյ՝ պատրաստուում է այժմ ի կատար ածել մի շարք արմատական, վաղուց բաղձացւած ռէֆորմներ, որոնք սարսափեցնում են ռէակցիային:

Ժօռէս թեւ է տալիս այդ միսիստրութեան և միաժամանակ ազդարարում է ամէն առթիւ, բարձրաձայն, առանց վերապահութեան՝ որ սօցիալիստական կուսակցութիւնը իր իդէալն ունի, որը նա երբէք չպիտի մոռացնի իր տալ, որ բուրժուա-ռամկավարութեանը աջակցելով՝ նա մի վայրկեան անգամ չպիտի լքանէ «դասակարգային կուռի» տեսակետը, իր կուսակցական ինքնուրոյնութիւնը և դիսցիպլինը, իր կօմմունիստական դաւանանքը:

Ժօռէս ազդարարում է այդ բոլորը և շարունակում է տենդային եռանդով յորդոր կարգաւ սօցիալիստական հակառակորդ թեւին՝ Գէդի ու Այալների կուսակցութիւններին՝ միանալ ձուլել ի մի հզօր սօցիալիստական ամբողջութիւն, որը, ըստ Ժօռէսի, հնարաւոր է «միջադ-

գային կօնգրէսներին խարիսխի վրայ՝ և որի իրականացումը, ինչպէս Բէքէճն էր ասում համաժողովի փակման ճառի մէջ, պիտի լինի «ամենաբախտաւոր երևոյթը միջազգային սօցիալիզմի կեանքում»:

Ամստերդամի կօնգրէսի ճնշման տակ՝ Գեղը համակերպեց — և այսօր միութեան բանակցութիւնները սկսած են արդէն...

ԹԻ ԼԵ Ի ԹԻ ՈՆ

ԴԱՅԿԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՑՈՒԹԻՒՆ

«ՃԵՐԾԱԿ ԳԻՐԲ»

Դիւանագէտի ձեռքով խմբագրւած, բաւականաչափ մանրամասն, քաղաքական այդ զօկումները ներառած է ամբողջապէս Տաճկահայաստանի անցքերին, սկսած 1903 թւի հոկտեմբեր 16-ից մինչև 1904-ի յուլիսի 31-ը:

Հետաքրքրական է, թէ ինչպէս են ներկայացւած այդ անցքերը մի մեծ պետութեան գործակալների կողմից, ինչպէս են նրանք վերաբերւում հայ յեղափոխական շարժումներին, և ի՞նչ չափով են այդ շարժումները անդրադառնում դիւանագէտների տրամագրութեան վրայ:

Մխիթարական — աւաղ — շատ բան չենք գտնում այդտեղ: Դիւանագիտութիւնը ընդհանուր առմամբ մնում է հաւատարիմ իր վաղեմի ընթացքին, միշտ ներդաշնակ թիւրք կառավարութեան դիմաց, միշտ խստապահանջ հայ յեղափոխականների նկատմամբ: Իրաւ է, որ նա այլևս առաջնայ պէս չէ նայում այդ վերջինների վրայ, — յեղափոխականների ու նրանց կռիւների մասին «ճերմակ գիրքը» խօսում է պատկառանքով, երբեմն հիացումով... Իրաւ է միևս կողմից, որ դիւանագիտութիւնը թոյլ չի տալիս այլևս, որ դահիճը շատ հեռու գնայ իր գազանութիւնների մէջ, նա արգելք է լինում 1895-ի աղետների կրկնութեան, — մի թեթեւ սփոփանք վշտահար ու լքւած ժողովրդի համար — բայց նա վճռական բայեր չէ անում հարցի գործնական լուծման տեսակետից, նա չէ աշխատում սահման դնել քրդի ու թիւրքի ամենօրեայ աւերածներին, նա չէ հոգում կանխելու խմբական սպանութիւնները, նոյնիսկ այն դէպքերում, երբ ինքը տեղեակ է բարբարոս կառավարութեան ծրագիրներին...

Սառույնի գործերը մի վայրկեան շատ սպասնայի էին — գրում է 1903-ի հոկտեմբերին էրզրումի անդլիական հիւպատոս Հէմպսոն — 1891-ի և 93-ի կոստրածների յիշողութիւնները ինքնին վտանգի աղբիւր են մի երկրի մէջ, ուր ստորադասները այնքան յաճախակի են և ուր ջգտնութեան ու մոլեռանդութեան գաւառ սրտ մը կազմում է զեկաւարտ սպանագործութիւնը: Նորերս հրաման տրւեցաւ՝ ի գործ դնել զինւորական ու ժ Սառույնի յեղափոխականների դէմ... Բայց լեռներում գործողութիւնների չըջանը անցած է համարեա եւ ձմեռը՝ այս վայրերի մեծ խաղաղարարը, արդէն վերահաս է»:

Այսպէս է հանգստացնում իրազեկ հիւպատոսը Պօլսի իր դեսպանին, որը իր կողմից հանգստացնում է լորդ Լանսդօունին:

Եւ ապա շարունակում է հիւպատոս Հէմպսոն նոյն զեկուցման մէջ.

«Բազմաթիւ հայ խմբեր անցել են Ռուսաստանի ոսնմանից. նրանցից մի քանիսը մեծ աջակցութեամբ հասել են Սառույն, ուրիշները ընդհարւելով յետ են վերադարձել:

Նրանք շատ քիչ տրամադրութիւն են ցուց տալիս՝ դիմադրելու և ևս կարծում եմ, որ նրանց չարք մենքից չափաւոր ձեռնարկած են, իրենց արդիւնք մի անասկ համաձայնութեան հայ և մակեդոնական կոմիտէների միջև: Ծաւայի է, որ սահմանադրւած ուսման կողմից աւելի ևս անց չէ ցուց տրոււմ խանդավառ նրանց մտադր թիրաքիս»:

Ապա գալիս են նոյն հիւպատոսի մի շարք զեկուցումները, որ վերաբերում են Բասենի կռիւներին: Թիւրքաց կորուստների մասին նրա հաղորդածը չպիտի զարմացնէ մեզ, քանի որ առնւած է թրքական աղբիւրից:

«Ռուսաց սահմանի մօտ ընդհարում է տեղի ունեցել հայ յեղափոխականների և թիւրք զօրքերի միջև: Առաջ ջրնները՝ իւրով 80 հարի, որանցից 60-ը ձիա սուր, Հայերը բաժանու ած երեք մասի՝ բռնել են ու մեղ գիրքեր, սկսել է կռիւ թիւրք ջոկատի հետ, որ սկսել է մի ամբողջ օր: Հայերը ցրւել են, թողնելով շատ սպանուածներ ու վիրաււորներ, թիւրք տակաւին յայտնի չէ: Զօրքերից սպանուել են՝ մէկ հարի յապետ, մէկ յիւնսպետ, 3-6 զինւորներ, վիրատու են ևս երկու սպաններ և մի քանի մասնաւորներ:

«Լորդ գէպի մասին ու չ հասաւ էրզրում, որովհետեւ հարկը կարտել էին հեռադրակելովը:

«Վային անմիջապէս գրկեց երկու վաշտ հետեւ տկներ և մի փոքրիկ ջոկատ հեծելազօրք՝ կարող մերտնդանելու համար. հրամանատարն է՝ ընդունակ ա կրիւ ած մի սպայ... Կարծում են, որ հայերը անցել են սահմանի միւս կողմը և ուր կռիւը վերջացած է:

«Ըստ սովորութեան, չէտ կրկնուր հառան էրզրում շատ չափազանցած ձեւով. առաջ եկաւ խիստ յազմանք ու երկիւզ: Բայց վային անմիջապէս ձեռք առաւ բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անկարգութիւնների առաջն անմեղութեան համար»:

Նոյն հիւպատոսը զեկուցանում է հոկտեմբերի 16-ին.

«Մի երկրորդ հայկական արշաւախումբ, բաղկացած 57 հոգուց, անցել է սահմանը և ընդհարւել է մի թիւրք ջոկատի հետ Գոմաձոր գիւղում: Կռիւը տեւել է ամբողջ օր: Այդ խումբը եւս ցրւել է, թողնելով մի քանի վերիներ ու վիրաւորներ: Զօրքից սպանու ած է մի հարի յապետ և ու Ռ. րիչ կորուստներ: Գեւ յայտնի չեն: Մանդատանութիւնները պակասում են, որովհետեւ հեռադրական թիւրք զարմաւ կարտում են»:

Պատմում ենք ժամանակագրական կարգով.

Հոկտեմբերի 21-ին և Պօլսի անգլիական դեսպանը հեռագրում է արտաքին գործերի մինիստր Լանսդօունին.

«Ամսոյս 17-ին հեռադր ուղարկու Սարրերգի մեր փոխ-հիւպատոսից, որը հաստատում է, թէ խարէփիի ֆրանսիական հիւպատոսի և ուրիշ պաշտօնական անձերի ստացած տեղեկութիւնների համեմատ՝ այդ պատուում նկատելի է ծայրայեղ զրպսում քրիտանուանների դէմ: Եւ տեսնելիցայ այդ անթիւ արտաքին գործերի մինիստրի հետ, և նա խոստացաւ հեռադրով հրահանգել, որ ձեռք առնին բոլոր նախազգուշութիւնները՝ քրիտանուաններին հովաւնաւ տրելու համար»:

Նոյն դեսպանի մի այլ հեռագրական զեկուցում, ուղղւած Լանսդօունին, հոկտեմբերի 23-ին, վերջանում է հետեւեալ տողերով.

«Կռիւներ ալիւս տեղի չեն ունեցել սահմանի մօտերը, և թուում է թէ ամէն բան խաղաղ է աքնակի Սալայն առում են, որ յեղափոխականների մի պատկառելի թիւ անցել է Սառույն կամ թագնել է գիւղերում: Հիւպատոս Հէմպսոն ու չադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ՝ որ զուրի գործողութիւնների միջոցին զօրքը չէ դիմել թալանի կամ վայրագութիւնների: Հէմպսոնից ևս ստացել եմ մի զեկուցում, որի համեմատ կառավարութիւնը հրամայել է իր զիսաւորութիւնից՝ սկսելու յարձակողական գործողութիւններ Սառույնի յեղափոխականների դէմ, եւ զօրքերը իջել են լեռներից»:

Հոկտեմբերի 29-ին հիւպատոս Հէմպսոն և Պօլսի իր

գետական ուղղած մի մանրամասն հեռագրի մէջ, կրկին անգամ ծանրանալով Բասենի կռիւների վրայ, աւելացնում է.

«Ինչպէս երեսում է, հայերը կռել են յուսահատ կերպով. վալին պատուէր ինձ մէկ հայի մասին, որը վեց զին-դակներով վիրաւորուած եւ գետնին փռւած լինելով՝ շա-րունակում էր կրակել իր սարճանակը».

Ճշմարտախօս վալին իմացել է, ի հարկէ, և անհեթեթ ստեր յօրինել, որոնց թերեւս հաւատացել է միամիտ անգլիացիները. Հէմպսն հաղորդում է նոյն հեռագրի մէջ.

Արշաւարդները, ասում են, կազմւած էին զինուորա-պէս Վրաստանի հայերից և նրանց խօսած լեզուն էր վրացերէն. նրանց մեղադրում են, թէ գործ էին գնում բարբարոսութիւններ, ի՞նչ կարում էին մահաւտական գի-ղացիների քիւրը եւ աղին».

Հոկտեմբերի 19-ի հեռագրով՝ Էրզրումի հիւպատոսը ուզում է բնորոշել հայ յեղափոխական կազմակեր-պութիւնը.

«Շատ դժւար է, ասում է նա, ձեռք բերել արժանա-հաւատ տեղեկութիւններ հայ յեղափոխականների կամ «Ֆէդայիների» քանակութեան, կազմակերպութեան ու ծրագիրների մասին Սասունում. եւ մեծ վարանումով է, որ հաղորդում եմ ձեր գերագնացութեան հետեւեալ ման-րամանութիւնները, որ հասել են ինձ. —

«Ֆէդայիները վերջերս իրստ աճել են թւով և ուժով. Ասում են, որ նրանց թիւն է այժմ 5, 6, 000 — բոլորն էլ լաւ զինւած, մարդւած ու կազմակերպւած: Նրանք կա-տարելապէս տէր են Մշոյ դաշտից դէպի հարաւ դանդող լեռներին և նրանց իշխանութիւնը տարածւում է դաշտի շատ գիւղերի վրայ և նոյնիսկ Մոշ քաղաքի մի ընդար-ձակ մասի վրայ:

«Նրանց առաջնորդ Անդրանիկը մի շատ ճարպիկ մարդ է, որին հնազանդ ուժ են բացարձակօրէն ջիւղորական կազ-մակերպութիւնը ղեկավարում է Տուսանով *» անւանը կովկասցի մի հայ, որը եղել է ուսուցիչ գործի մէջ, և ինչ-պէս ասում են, եղել է սպայ:

«Թէ ի՞նչ կարող է լինել Ֆէդայիների ծրագիրը, — ես անկարող եմ ասել, բայց եթէ այս տեղեկութիւնները ստույգ են, աներկբայի է թւում, որ մօտ ապագայում նրանք նշանաւոր գիւղացի իսաղան այս կողմերում».

Նոյեմբերի 16-ի իր հեռագրի մէջ Էրզրումի հիւ-պատոսը խօսում է քրդերի բռնած դիրքի մասին.

«Մի նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրութեան մէջ վերջին ամիսների ընթացքում, — դա քրդերի աշխա-տակցութիւնն է հայերի հետ: Շատ յայտնի իրողութիւն է, որ եթէ թիւրք կառավարութիւնը այս ամառ հրամարեց Սասունի վրայ յարձակուելու մտքից, — դրա պատճառներից մինն էր քրդերի անսպասելի դիրքը, որոնք մերձեցին իրենց աշակցութիւնը առաջարկւած յարձակման համար: Եւ իմ ֆրանսիացի պաշտօնակիցը այժմ հաղորդում է ինձ, որ քրդերի ու հայերի միջև մի քանի ժամանակից ի վեր սկսւած բանակցութիւնները որոշել են, իր կարծիքով, որ քրդերը պէտք է պահպանեն իրստ չէզոքութիւնը երկու փառս վկայում են այդ կարծիքի հաստատականութիւնը. 1)՝ Քրդերը, մանաւանդ Սալթիկի (°) քրդերը այս աշնան աշակցում էին Սասունում զօրքերից պաշարւած Ֆէդայի-ներին, հասցնելով նրանց ուսուցիչ պաշարւած Ֆէդայի-կանների գործածութեան տակ գտնուող գէնք ու ուղւա-միւրքը պատրաստել են իրաւական քանակութեամբ՝ հայ սրհնասաւորների ձեռքով, որոնք սպրդում են այն չրջանի քրդական աներում».

Անցնում ենք խոշոր, ընդհանուր գծերով.

Դեկտեմբերի 28-ին Թաւրիզի անգլիական հիւպա-տոսը զեկուցանում է.

«Վերջին մի քանի շաբաթների ընթացքում հայ յեղա-փոխականների մի պատկառելի թիւ անցել է Ռուսաստանից՝

Պարսկաստանի վրայով թիւ քիւր 40, 50 հոգի անցել են թաւրիզով — դրանց հետ ևւ առաջնորդները — և մօտ 200 հոգի բռնել են ուրիշ ճանապարհներ: Մեծ թւով հրացան-ներ, որ յեղափոխականները գնել են ուսուցիչ վրաստանցից, նոյնպէս փոխադրւել են թիւրքական սահմանով, մի կա-շառւած քիւրք ցեղապետի միջոցով, և պատրաստու-թիւններ են տեսնուում ապստամբութեան համար, պարիսեր, Վանի չրջանում: Եւ տեղեկութիւն տեսնւում, որ հայերը աշ-խատում են համոզել քրդերին միտամանակ ապստամբելու սու թիւանի դէմ».

Փետրւարի 23-ին անգլիական դեսպանը Կ. Պօլսից հեռագրում է միմիտը Լանսդունին.

«Դուք ստացել է յս վիչ լուրեր՝ քրիստոնեաների ու մուսուլմանների ընդհարումների և յեղափոխականների պործանէութեան մասին: Սասունի չրջանում Հաղորդում են, որ Ինեզիան (°) գիւղում մի քանի մուսուլմաններ են սպանուած:

«Մեծ վիզիրին արած իմ շատ լուրջ ու կրկնակի գի-մումների միջոցին, ես ինքրեցի նրան, որ քրդերը պահեն սահմի տակ ևւ որ եթէ զինուորական գործողութիւնները անխուսափելի դառնան, նրանք սահմանափակւեն կանո-նաւոր պօրքով: Նորին բարձրութիւնը հաւատացրեց, որ ծաղրայեղ միջոցների գիմնու վտանգը չկայ».

Լանսդունի պատասխան դրան՝ հեռագրում է դես-պան Օկօնօրին.

«Կատարեալ հաւանութիւն եմ տալիս ձեր արած քայլին, որով մեծ վիզիրի ու շաղրութիւնն էք հրաւիրում ինքրի վրայ ևւ նրանազում եմ ձեզ շարունակել խորը հաւակացնել թիւրք կառավարութեանը այն վտանգը, որ կապւած է այս ու այն յախուռն, բոնի պործողութիւնների հետ՝ ուղղւած հայերի դէմ:

(Կը շարունակւի):

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

Լ Ե Հ Ա Ս Տ Ա Ն Ը Բ Ո Ւ Ն Կ Ի Ո Ւ Մ Է

Անսովոր յուզումների թատր է վերջերս ուստական Լե-հաստանը: 1863 թ-ի հերոսական ապստամբութիւնից ի վեր Լեհ ժողովուրդը վկայ չէր եղել այդպիսի ուժեղ բռնկումների:

Ահաւասիկ անցքերի հակիրճ ամփոփումը, որ մենք ստա-ցանք Լեհական Սօցիալիտ Կուսակցութեան օրգան՝ *Prace i* *sprawa* ի խմբագրութիւնից.

«Նախ քան զօրաշարժ սկսելը մեր կուսակցու-թիւնը հրատարակեց տասնեակ պրօկլամատիւններ, հազարաւոր օրինակներով՝ ուղղւած Լեհ ժողովուրդին, պահեստի զինւորներին: Պրօկլամատիւնները յորդորում էին՝ չգնալ, դիմադրել Գրաւոր յորդորներին ուժ տալու համար՝ կազմեցին մեր նախաձեռնութեամբ հրապարա-կական բողոքի ժողովներ՝ Վարշավայում, Դոմբրօվայի, Լօձի, Չենստօիւօվի, Լիւբլինի շրջաններում: Ոստիկանու-թիւնն ու զօրքը ամէն տեղ միջամտեցին և վայրագօրէն ճնշեցին: Բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորներ մա-նաւանդ Լեհերի կողմից: Պատերազմի կոչւածների մեծա-մասնութիւնը գնաց: Բայց հազարաւոր երիտասարդներ դասալիք եղան, փախան արտասահման:

«Նրախուսուած իր առաջին աջողութիւնից՝ կառավա-րութիւնը որոշեց զէնքի կոչել ամբողջ Լեհաստանի պահեստի զինւորներին: (Մինչ այն կանչւած էին 19

*) ԺԱՍՈԹ. — Անխարկւած է հանգուցեալ Թորգոմը:

չըջաններում միայն)։ Այն ժամանակ մարտական կուսակցությունը որոշեց կազմակերպել զինւած ցոյց։ Նա տեղի ունեցաւ Վարշավայի մէջ և ունեցաւ հազարի շառաշուտ։ Հոկտեմբեր 31-ի կէսօրին էր, Գրզիբովսկա հրապարակի մեծ տաճարից ժողովուրդը խուռն բազմութեամբ դուրս գալու միջոցին՝ բարձրացաւ կարմիր դրօշակը, մի կողմում գրւած՝ «2եկք ուզում ցարի զինւոր լինել», միւս կողմում՝ P. P. S. (Լեհական սօց. կուսակցութիւն)։ Հէնց որ ցուցարարների կօրտէժը սկսեց առաջ ընթանալ, ոստիկանութիւնը վրայ հասաւ սրերով, բայց նրան դիմաւորեցին ատրճանակների միահամուռ հարւածներով, որոնք անասելի շփոթութիւն ձգեցին թշնամու շարքերի մէջ։ Մի քանի զինւորներ ընկան։ Ցոյցը ստացաւ կանոնաւոր կուէի կերպարանք։ Ցեսարանը վեհ էր, տպաւորիչ։ Զօրքը եկաւ ճնշեց, բայց բազմութիւն մասնակի կօրտէժներ սարքեցին ու անցան քաղաքի զանազան կողմերով և ամբողջ օրւայ ընթացքում աւերաճանակի որոտումներ էին լսում։ Վարշավայի փողոցներում։ Հետեւանք՝ 17 սպանւած և 70-ի չափ վիրաւոր։ Այդ թւի կէսը պատկանում է ոստիկանութեան։

«Գործը, իհարկէ, սրանով չի վերջանայ։ Յուզումը մեծ է ամբողջ Լեհաստանում և նոր-նոր աճեցւում է անխուսափելի են»։

Վերջին պահուն հեռագիրը ծանուցանում է, որ շուտով նոր ցոյց կը լինի. բանտարկների ձեռքը սրւած է 6000 ատրճանակ։ Ոստիկանութիւնը ստիպւած է արձակել շատ բանտարկեալներ, որովհետեւ բանտերը լեփ լեցուն են։

*

Երկրից մեզ հաղորդում են.

Հայ յեղափոխական խմբի մի մասը՝ Նարեկ գիւղում պաշարեց Ոստանի 40-45 զինւորների կողմից։ Լուր առնելով՝ մեր ընկեր Իշխանը յանկարծակի յարձակւում է պաշարողների վրայ, 6-7 հոգի սպանում, միւսներին փախցնում։ Գիւղի երիտասարդները այդ գէպից յետոյ՝ շատ զգուշաւոր դիրք են բռնում, սպասելով նոր յարձակման։ Բայց շուտով վանից հասնում է ամբարիկական միսիօնէրը և կառավարութեան կողմից յորդորում գիւղացիներին հանգիստ մնալ, խոստանալով կատարեալ ապահովութիւն։

Մշոյ դաշտի Եօնճալու գիւղում ֆէդայիները յարձակեցին մի տաճկական ջոկատի վրայ, որ թնդանօթ էր տանում։ Հայերի միահամուռ յարձակմանը չդիմանալով՝ ջոկատը ցրւում է, թողնելով բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորներ։

Համիրամ գիւղում հայ յեղափոխականները պաշարւում են Կոտան Ալի բէկի կողմից։ Կոիւր տեղում է 14 ժառի Խումբը գիշերով պատուում է շղթան և անցնում, զոհ տալով Դաշտեցի Պետրոսին։

*

Վ. Պօլսից մեզ գրում են.

«Կարմիր Սուլթանը յղացել է մի նոր դիտաւորութիւն, — իր Բիւրճանէդդին որդուն գահաժառանգ նշանակել։ Ինչպէս յայտնի է, օսմանիւն թագաւորող ցեղի մէջ գահը ժառանգում է իշխող տան մեծը, հետեւաբար, կանոնով, Սուլթան Համիդի մահից յետոյ՝ այդ գահի ժառանգու-

թիւնը պիտի անցնի իր եղբոր՝ Բէշիդ Էֆէնդուն։ Սակայն Համիդ՝ ցանկանալով աջողացնել իր որդու ժառանգութիւնը, այժմանից սկսել է մտածել այդ մասին և երեւի աջողութիւն է գտնելու, ինչպէս ցոյց են տալիս իր արած քայլերն ու գէպերը։

«Նախ ուզում է թագաժառանգ Բէշիդ Էֆէնդու անունը ծննդի և նրան բոլորովին չեզոքացնել։ Բէշիդ Էֆէնդու անունը հանգուցեալ Սուլթան Ազիզի և Մուրադի անունների նման թիւրքիայում երբէք չէ յիշւելու։ Ճիշտ այդ տեսակետով և յետին մտքով, Սուլթանը՝ երբ ելեմտական նախարարութիւնը յանձնեց ներկայ նախարարին, նրան էֆէնդութիւնից յանկարծ փաշայութեան բարձրացրեց, որովհետեւ նախարարի անունն էլ Բէշիդ էր և որպէս զի Բէշիդ Էֆէնդու գիւղացի կոչւելով այդ անունը չյիշեցնի թագաժառանգ Բէշիդ Էֆէնդու անունը (կայսերական գերդաստանի անգամները էֆէնդու են կոչւում)։

«Սուլթանը նոյնիսկ չէ ուզում, որ Բէշիդ անունը ունէ պարագայի տակ յիշւի լինի Էֆէնդուի կամ փաշայ։ Այս առթիւ յիշենք հետեւեալ յատկանշանական գէպը։ Երբ Եգիպտոսի խզիվը վերջին ժամանակներս Պօլիս այցելեց, ի պատիւ նրան պալատի մէջ ճաշկերոյթ տրւեց. ներկայ էին բոլոր նախարարները և խզիվի հետեւորդները։ Թիւրք թերթերը ճաշկերոյթին ներկայ գտնւողների անունները պաշտօններով և իսկական անուններով յիշելով, երբ կարգը գալիս է ելեմտից նախարար Բէշիտ փաշայի անուն, յիշատակում են նրան միմայն իր պաշտօնի անունով, առանց իսկական անունը տալու։ Այսպէս, — Մալիյէ նազըրը տեօվլէթլու փաշա հազըրէթլէրի — (Ելեմտից նախարար վսեմ։ փաշան)։ Եւ այս ցանկը, պէտք է գիտնալ, ուղղակի պալատից է եղել հաղորդւած թերթերին։

«Թագաժառանգ Բէշիդ Էֆէնդու վրայ այժմ խիստ հսկողութիւն է նշանակւած. վերջերս նրա ներքինապետին և մի քանի ծառայողներին սուլթանը աքսորեց, այն պատրուակով թէ մի զինւոր նամակ է տարել նրա տունը։

«Լուր է պատոււ, որ սուլթանը շուտով հանգուցեալ Մուրադ Էֆէնդու փիճակին է հասցնելու թագաժառանգ Բէշիդ Էֆէնդուն, նրան բանտարկելով այն պալատում, որտեղ բանտարկւել էր և վախճանեց նախկին սուլթան Մուրադը, որից յետոյ ծանր պիտի թափէ իր Բիւրճանէդդին որդին թագաժառանգ նշանակելու և եւրոպական տէրութիւններից հաստատելու նրա թագաժառանգութեան օրինաւորութիւնը։ Ծրագրի յաջողութիւնը գրեթէ ապահովւած է, որովհետեւ ներկայ նախարարները և Շէյխ-Իւ-Խալաֆը չեն կարող հակառակիլ սուլթանին և ստիպւած պէտք է վաւերացնեն այդ առաջարկը։ Հանգուցեալ սուլթան Ազիզն էլ աշխատեց իր որդուն Իւսուֆ-Իզզէդդին Էֆէնդուն թագաժառանգ նշանակել տալ, սակայն այն ժամանակեայ նախարարները և Շէյխ-Իւ-Խալաֆը հեղինակութիւն ունէին և բացարձակապէս մերժեցին Ազիզի խնդրքը. իսկ ներկայ նախարարները Կարմիր Սուլթանի ձեռքում պարզ գործիքներ են»։

*

Վ. Պօլսից հեռագրում են եւրոպական մամուլին.

«Ռուս-թրքական սահմանագլխին քրդական մի աւազակախումբ յարձակում գործեց, թալանելու նպատակով մի ռուս գիւղի վրայ, բայց կոզակները հալածեցին նրանց մինչև տաճկական սահմանագլուխը։ Ողաւառ քրդերը հաղորդեցին թիւրքաց սահմանապահ զօրքին, թէ իրենց հալածողը հայ յեղափոխականներն են։ Այդ պատճառով թիւրք զինւորները կրակ բաց արին կոզակների վրայ. մի քանիսը սպանեցին, շատերը վիրաւորեցին։ Վ. Պօլսի ռուսական զեսպանատունը գեռ ևս չունի այդ միջադէպի մասին մանրամասն զեկուցում իր գործակալներից։ Կայ միայն հակիրճ տեղեկութիւն Էրզրումի վալիից և ռուս հիւպատոսից։ Երկու կողմից պատրաստւում է քննութիւն»։

*

«Արմէնիա» լրագիրը, որի հիմնադիրը՝ Պ. Մկրտիչ

Փորձուգելիս Ասպուրականի յեղափոխական անդրանիկ զործիչներին մէկն է, այս տարի տօնեց իր գոյութեան 20-ամեակը:

*

Գերմանական Bresl. Zeitung-ի մէջ կարգում ենք Վրթամարի կուէի մասին հետեւեալ տողերը:

«Այժմ միայն ստացւած են հիւպատոսական տեղեկագիրներ՝ այն մոլեգին յարձակման մասին, որ արել է հայ յեղափոխականների կատաղի առաջնորդ Անդրանիկը՝ Վանայ լճի վրայ գտնուող Աղթամարայ փոքրիկ կղզու վրայ: Լճի շուրջը զանազան պառլամենտներ գործելուց յետոյ՝ Անդրանիկը իր մարդիկներով մի քանի նաւ առած և հայ յեղափոխական զօրակցները՝ փոխադրուած է վերոյիշեալ կղզին, գրաւում է այնտեղի վանքը և վանքի վրայ ևս ծածանեցնում է յեղափոխական զօրքը:

«Այդ լուրը առնելով՝ մի քանի օր յետոյ ուղարկուած է տաճկական մի զօրեղ ջոկատ՝ Անդրանիկին դուրս քշելու համար: Մօտ 30 թնդանօթի հարւածներ տեղացին կղզու վրայ, որոնցից չորսը միայն հասան նրան, այն էլ առանց ունէ վնաս պատճառելու: Հետեւեալ օրը Անդրանիկը թողեց կղզին նոյն ձեռով, ինչ ձեռով եկել էր այնտեղ: Այդպիսով նա մի քանի օր տէր մնաց կղզուն: Այն ժամանակ միայն թիւրքերը յետ վերցրին կղզին, քրդերը այդ միջոցին վայրագութիւններ գործեցին:

«Վան քաղաքից ևս տեղեկութիւններ են գալիս մի հետաքրքրական էպիզօդի մասին, որ տեղի է ունեցել մօտ մի ամիս առաջ: Մէկ ժանդարմի սպանութեան առթիւ, — սպանութիւն, որ իրաւամբ հայերին է վերագրուած — մահաւորականների մէջ սկսեց մեծ յուզում: Երիտասարդ տարրերը հաւաքեցին և ուզում էին յարձակել հայերի վրայ: Մի տեղ նոյնիսկ երկու տներ վառեցին: Հեռատես վալին՝ դէպքերի առաջն առնելու համար՝ հրապարակով ծանուցեց, որ նրան հարկաւոր են 300 կամաւորներ՝ մահաւորականներին պաշտպանելու համար: Կամաւորները անմիջապէս ասպարէզ եկան յուզածների շարքերից. նրանք առ երեւոյթս ընդունեցին վալիից, սակայն մի քանի օրից յետոյ, երբ յուզմունքն անցաւ, նորից արձակեցին»:

*

Հոկտեմբերի 27-ին, երբ ռուսաց լուսաւորութեան մի նիստը Վարչապետով անցնում էր՝ նրան ներկայացաւ լեհական մի պատգամաւորութիւն՝ խնդրելու, որ մասնաւոր դպրոցներ հիմնելու պայմանները մեղմացնեն և թող տան աշխարհագրութիւնն ու պատմութիւնն աւանդել լեհերէն: Մինիստրը պատասխանեց, թէ Սփետոսպօլի-Միրսկու ծրագրին իր կողմից տւած հաւանութիւնը պէտք է նկատել իբր երաշխիք խնդրի գոհացուցիչ լուծման համար:

*

Ռուսնողական խառնակութիւնները վերսկսում են: Հոկտեմբերի 31-ին, տեղի ունեցաւ ռուսնողական մի մեծ ժողով Պետերբուրգի համալսարանում: Խօսեցին ռուս-եռապօսական պատերազմի դէմ և ֆաշայն պահանջներին նրա անմիջական դադարեցումը:

*

Սեպտեմբերի 9-ին Օդեսայի գլխաւոր փողոցներից մէկում սպանութեան փորձ եղաւ քաղաքապետ Նելգարտի վրայ: Փորձը անաջող եղաւ: Զարնող երիտասարդը ձերբակալւած է: Նրա անունն է Պօլիակով:

*

Կազանի համալսարանում, հանդիսաւոր նիստի միջոցին, մի հայ ուսանող ընդհատեց պրօֆէսորի ճառը, կոչելով. «Այդ չէ, որ հարկաւոր է մեզ»: Անմիջապէս բեմ բարձրացաւ ռուսնողների մի խումբ և պարզելով կարմիր զօրակցը՝ Մարտիկէզ՝ հնչեցրեց: Նրանից յետոյ ռուսնողները ուղեցին կօրտէժ կազմել և խմբովին ուղղել դէպի թատրոն, բայց ոստիկանութիւնը ցրեց նրանց: Ոչ մէկը չհերքակալեց: Նոյն օրը, երեկոյեան, աստուածաբանութեան ֆակուլտէի մէջ պայթեց մի վառարան, որի մէջ վառօդ էին դրել: Վիրաւորւած չկայ:

*

Ռուսաց պահեստի զինւորները՝ Վօլոգդայի նահանգից Մօսկա բերելիս՝ ըմբոստացան. նրանք բարեր ու փայտի կտորներ նետեցին զօրքի վրայ, որը եկել էր վերականգնելու կարգը: Վիրաւորւեցին 4 օֆիցէրներ և 9 զինւորներ: Զօրքը նախ օդի մէջ կրակեց, բայց ապարդիւն անցնելով՝ գնդակներ տեղաց ըմբոստ բեզբրվիստների վրայ: Երկուսը սպանեցին և վեցը վիրաւորեցին:

*

«Ռուսակ. Վէդօմօստի» ազատամիտ լրագիրը հետեւեալ կարծիքն է յայտնում:

«Հայկական ապստամբութիւնը Տաճկաստանում, բոլոր երեւոյթից, կանգ առաւ. դրնէ բաւական ժամանակից ի վեր մոմուելի մէջ այլևս չեն երևում լուրեր զինւորական գործողութիւնների մասին, իսկ վերջին նորութիւնը՝ ապստամբութեան թատրից այն է, որ թիւրքերը կառուցել են լեռների մէջ երկու զօրանոց և չորս փոքրիկ ամրութիւններ՝ որպէս զինահարկի դարձնեն ապստամբութեան շարունակութիւնը:

«Այն յոյուրը՝ թէ ապստամբութիւնը կը գրաւէ պետութիւնների ուղարկութիւնը բազմաառանջ հայ ժողովրդի վիճակի վրայ՝ առայժմ չ'արդարացան, որովհետեւ միջազգային դրութիւնը վերին աստիճանի անկայտութիւն էր հայերի համար:

«Սակայն ոչ ամրութիւնների շինութիւնը Սասունում, ոչ էլ Եւրոպայի անտարբերութիւնը չեն նշանակում, իհարկէ, թէ հայկական հարցը այլևս գոյութիւն չունի: Նա կը շարունակէ իր գոյութիւնը, քանի դեռ թիւրքերը կը արհեստապէս խառնակեն, քանի դեռ անապահով կը մնան հայերի կեանքն ու դպրը: Վաղ թէ ուշ նրանք դարձեալ կ'ապստամբին՝ պաշտպանելու համար մարդկային ամենատարրական իրաւունքները: Եւրոպան պէտք է հասկանայ, որ հայոց հարցը չէ կարելի խեղդել ոչ տաճկական թնդանօթներով, ոչ էլ քրդական սկիւններով: Նրա գոհացուցիչ լուծումը կըտայ միայն Հայաստանի ինքնավարութիւնը»:

Նոյն խնդրի առիթով ռուս «Միր բօժի» ամսագիրը մէկ յօդաւածում գրում է ի միջի այլոց.

«Զարմանալի ոչինչ չկայ, որ հայերը անհնարին գտնելով հասնել արդարութեան ու ապահովութեան՝ օրինական ճանապարհով՝ դիմում են իրենց յեղափոխական օրգանների օգնութեան:

«Սասունի շրջանում գործում է Հայ Յեղափոխական Կաշնակցութեան ներկայացուցիչ Անդրանիկը, որը շատ անգամ արդէն աջակցել է յետ միեւ առաջիկ զօրքերը: Բայց նրա ուժերը անբաւարար են և նա չէր կարող արդեւ լինել թիւրք և քիւրդ միացած ուժերին՝ աւերելու գիւղերը: Եւրոպական պետութիւնները հրաժարւում են ապգու միջամտութիւնից. դրութիւնը Հայաստանի մէջ միշտ աւելի և աւելի անտանելի է դառնում»:

«Տարակոյս չկայ, որ գործերի դրութիւնը Հայաստանում միշտ աւելի և աւելի բարդանում է, և հայոց հարցը ընդունում է նոյնքան ահաւոր բնաւորութիւն, որքան մակեդոնականը:

~~~~~



# Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ա Զ Գ Ե Ր

## Ա Զ Դ

